



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄԼՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ 22(413) «11» սեպտեմբերի 2020թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԶՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ		
508	«Արցախի Հանրապետությունում 2020 թվականի ապրիլի 12-ին հայտարարված արտակարգ իրավիճակի ժամկետը երկարաձգելու և Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի ՆՀ-32-Ն հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-162-Ն հրամանագիրը...	5
ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
509	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 377-Ն որոշումը.....	7
510	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 11-ի N 57-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 385-Ն որոշումը.....	14
511	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 7-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 390-Ն որոշումը.....	20
512	«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 1170-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 391-Ն որոշումը.....	21
513	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 392-Ն որոշումը.....	22
514	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 393-Ն որոշումը.....	23
515	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 394-Ն որոշումը.....	24
516	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 395-Ն որոշումը.....	25
517	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 396-Ն որոշումը.....	26
518	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 397-Ն որոշումը.....	27
519	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ	

	կառավարության N 398-Ն որոշումը.....	28
520	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 399-Ն որոշումը.....	29
521	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 19-ի N 293-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 410-Ն որոշումը.....	33
522	«Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 1160-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 414-Ն որոշումը.....	35
523	«Հոդերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 418-Ն որոշումը.....	37
524	«Հոդերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 419-Ն որոշումը.....	38
525	«Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 6-ի N 172-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 422-Ն որոշումը..	39
526	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 424-Ն որոշումը..	41
527	«Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 6-ի N 29-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 426-Ն որոշումը.....	44
528	«Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 1160-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 432-Ն որոշումը.....	45
529	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 28-ի N 339 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 433-Ն որոշումը...	47
ԻՆՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱԿՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
530	«Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 14-ի N 25-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 43-Ա որոշումը.....	48

531	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 71Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 45-Ն որոշումը.....	50
532	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 23-ի N 30Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 46-Ն որոշումը.....	52
ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
533	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 185 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ քաղաքացիական ծառայության խորհրդի N 234-Ն որոշումը.....	53
534	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի օգոստոսի 26-ի N 13 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ քաղաքացիական ծառայության խորհրդի N 235-Ն որոշումը.....	54
535	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի մարտի 30-ի N 95 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ քաղաքացիական ծառայության խորհրդի N 236-Ն որոշումը.....	55
536	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի ապրիլի 26-ի N 10 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ քաղաքացիական ծառայության խորհրդի N 237-Ն որոշումը.....	58
537	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի ապրիլի 26-ի N 8 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ քաղաքացիական ծառայության խորհրդի N 238-Ն որոշումը.....	59
538	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2007 թվականի օգոստոսի 7-ի N 134 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ քաղաքացիական ծառայության խորհրդի N 239-Ն որոշումը.....	61
ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
539	«Անհատ ձեռնարկատեր Մուրադ Միշայի Գրիգորյանին տրված լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 250-Ա հրամանը.....	63

540	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու, լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 129 հրամանը.....	64
541	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների գործունեության տրամադրման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության N 342-Ա հրամանը.....	65
542	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների գործունեության դադարեցման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության N 343-Ա հրամանը.....	66
543	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների գործունեության տրամադրման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության N 354-Ա հրամանը.....	67
544	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների գործունեության տրամադրման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության N 372-Ա հրամանը.....	68
545	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների գործունեության դադարեցման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության N 373-Ա հրամանը.....	69
ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
546	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ՇԴԴ/2469/02/16 որոշումը	70
547	Ուղղում	83

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
12-ԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԺԱՄԿԵՏԸ
ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ՆՀ-32-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Արցախի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19, այսուհետ նաև՝ վարակ) հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակը շարունակում է սպառնալ բնակչության կյանքին և առողջությանը և կարող է հանգեցնել անձանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման,

հիմք ընդունելով այն, որ 2020 թվականի ապրիլի 12-ին արտակարգ իրավիճակ հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքները դեռևս չեն վերացել, որի մասին են վկայում, մասնավորապես, 2020 թվականի սեպտեմբերի 11-ի դրությամբ հաստատված կորոնավիրուսային հիվանդության 328 դեպքերը, որոնցից 283-ը՝ առողջացած (2020 թվականի ապրիլի 12-ից հետո դեպքերի թվի աճը կազմել է 322), ինչպես նաև այն, որ Արցախի Հանրապետությունում ու Հայաստանի Հանրապետությունում վարակի հետագա տարածումը և վարակի դեպքերի թվի աճը շարունակում է սպառնալ մարդկանց կյանքին ու առողջությանը,

հաշվի առնելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանված՝ մարդու՝ որպես բարձրագույն արժեք հանդիսանալու սահմանադրական կարգավիճակը, ինչը պետությանը պարտավորեցնում է շարունակական միջոցներ ձեռնարկել անձանց կյանքի ու առողջության պաշտպանության համար, իսկ 2020 թվականի ապրիլի 12-ին հայտարարված արտակարգ իրավիճակի ընթացքում կիրառված միջոցառումներն ու սահմանափակումներն էական ազդեցություն են ունեցել վարակի տարածման դեպքերը նվազեցնելու գործում,

հիմք ընդունելով այն, որ Արցախի Հանրապետության Սահմանադրության 133-րդ հոդվածի ուժով Արցախի Հանրապետության Նախագահը լիազորված է երկարաձգել արտակարգ իրավիճակի ժամկետը, եթե արտակարգ իրավիճակ հայտարարելու հիմք ծառայած հանգամանքները չեն վերացել մինչև հայտարարված արտակարգ իրավիճակի ժամկետի ավարտը,

և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 93-րդ հոդվածի 20-րդ կետով և 133-րդ հոդվածի 1-ին մասով՝ **ո թ ո շ ու մ եմ**.

1. Երկարաձգել Արցախի Հանրապետությունում 2020 թվականի ապրիլի 12-ին հայտարարված և մինչև սեպտեմբերի 11-ը երկարաձգված արտակարգ իրավիճակի ժամկետը 2020 թվականի սեպտեմբերի 11-ից, ժամը 22:00-ից՝ 30 օրով՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 11-ը, ժամը 22:00-ն ներառյալ ժամկետով:

2. Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանագրի 1-ին կետում «սեպտեմբերի 11-ը, ժամը 22:00-ն» բառերը փոխարինել «հոկտեմբերի 11-ը, ժամը 22:00-ն» բառերով.

2) հրամանագրի հավելվածում՝

ա. 6-րդ գլխի վերնագրից հանել «ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ» բառերը,
բ. ուժը կորցրած ճանաչել 28-րդ կետը:
3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 11
Ստեփանակերտ
ՆՀ-162-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 օգոստոսի 2020թ.

N 377-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի «Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 350-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 23-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«23. Բազմամյա տնկարկների և միամյա մշակաբույսերի մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայի տեղադրում՝ համակարգի արժեքի անհատույց և (կամ) անտոկոս փոխառության միջոցով.

1) պետական աջակցության տրամադրման չափանիշները ներկայացված են N4 աղյուսակում.

2) պետական աջակցության տրամադրման պարտադիր պայման է հանդիսանում մեկ կուլտուրայի հաշվով նվազագույնը 1 հեկտար (բացառությամբ 0,5 մինչև 1 հեկտար մակերեսով բազմամյա տնկարկների), իսկ բանջարեղենի մասով՝ նվազագույնը 0,5 հեկտար մակերեսով հողատարածքի համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայի տեղադրման նպատակով հայտի ներկայացումը, այդ հողատարածքը ոռոգման ջրով ապահովված, իսկ բազմամյա տնկարկների դեպքում՝ նաև տունկը կատարված լինելը.

3) ոռոգման կաթիլային, ենթահողային և շիթային համակարգերով 1 և ավելի հեկտար նոր հիմնադրվող և մինչև 2 տարեկան բազմամյա տնկարկների, ծխախոտի և այլ միամյա մշակաբույսերի, 0,5 և ավելի հեկտար բանջարեղենի, ինչպես նաև ոռոգման անձրևացման ստացիոնար համակարգով 1 և ավելի հեկտար այլ միամյա մշակաբույսերի մշակության համար 1 հեկտարի հաշվարկով ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայի արժեքի 1 500 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում անհատույց և անտոկոս փոխառությամբ տրամադրվում է 750 000-ական ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի գերազանցող մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով.

4) ոռոգման կաթիլային, ենթահողային և շիթային համակարգերով 1 և ավելի հեկտար 3 և բարձր տարիքի բազմամյա տնկարկների մշակության համար մեկ հեկտարի հաշվարկով տրամադրվում է առավելագույնը 1 500 000 ՀՀ դրամ՝ անտոկոս փոխառության տեսքով, իսկ համակարգի արժեքի 1 500 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում՝ գերազանցող մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով.

5) 1 և ավելի հեկտար տնկարանային տնտեսություններում ոռոգման կաթիլային, ենթահողային և շիթային համակարգեր տեղադրելու համար 1 հեկտարի հաշվարկով ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայի արժեքի 2 000 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում անհատույց և անտոկոս փոխառությամբ տրամադրվում է 1 000 000-ական ՀՀ դրամ, իսկ համակարգի

արժեքի գերազանցող մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով.

6) 0,5 մինչև 1 հեկտար մակերեսով հողատարածքում ռոռզման կաթիլային համակարգով նոր հիմնադրվող և (կամ) բարձր տարիքի բազմամյա տնկարկների մշակության համար անհատույց տրամադրվում է ըստ նախահաշվի կազմված համակարգի 70 տոկոսը, բայց ոչ ավել քան 560 000 ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի մնացած մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով.

7) ռոռզման անձրևացման շարժական համակարգով 1 և ավելի հեկտար այլ միամյա մշակաբույսերի մշակության համար համակարգի արժեքի 50 տոկոսը տրամադրվում է անհատույց, բայց ոչ ավել քան 7 500 000 ՀՀ դրամ, մյուս 50 տոկոսը՝ անտոկոս փոխառության տեսքով, իսկ համակարգի արժեքը տրամադրվող պետական աջակցության չափը գերազանցելու դեպքում գերազանցող մասը և համակարգի տեղադրման արժեքը տրամադրվում է հողօգտագործողների կողմից.

8) նույն հողատարածքում կամ դրա մաս կազմող հողատարածքում ռոռզման կաթիլային, ենթահողային և շիթային համակարգերով ծխախոտի, բանջարեղենի և այլ միամյա մշակաբույսերի մշակության նպատակով երկրորդ և հաջորդող տարիների համար տրամադրվում է մեկ հեկտարի հաշվարկով 500 000 ՀՀ դրամ՝ անհատույց միայն կաթոցիկներով ներդրված միջշարային պոլիէթիլենային խողովակների փոխարինման նպատակով.

9) հանձնաժողովն Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից տեղեկությունների ներկայացման վերջնաժամկետից հետո քսանօրյա ժամկետում ստուգում է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը, տեղում ճշտում է հողատարածքների մակերեսները, ռոռզման ժամանակակից տեխնոլոգիաներ տեղադրելու հնարավորությունները և պայմանները, տվյալ հողատարածքում ռոռզման ջրի առկայությունը և ռոռզման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման նպատակահարմարությունը և այդ պահանջները բավարարող հողօգտագործողների համար սահմանում է ժամկետ՝ ռոռզման ժամանակակից տեխնոլոգիաների (բացառությամբ 0,5 մինչև 1 հեկտար մակերեսով բազմամյա տնկարկների և շարժական անձրևացման համակարգերի) տեղադրման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր) ներկայացնելու նպատակով: Փաստաթղթերի մեկ փաթեթը կազմվում է մեկ կազմակերպության կողմից.

10) համապատասխան կազմակերպությունների կողմից կազմված և նախարարություն ներկայացված փաստաթղթերը ենթարկվում են փորձաքննության՝ պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցներով.

11) 0,5 մինչև 1 հեկտար մակերեսով հողատարածքում ռոռզման կաթիլային համակարգով նոր հիմնադրվող և (կամ) բարձր տարիքի բազմամյա տնկարկների մշակության դեպքում հողօգտագործողները նախարարություն են ներկայացնում ռոռզման կաթիլային համակարգի տեղադրման նախահաշիվը.

12) ռոռզման կաթիլային, ենթահողային և շիթային համակարգերով 1 և ավելի հեկտար նոր հիմնադրվող և մինչև 2 տարեկան, 3 և բարձր տարիքի բազմամյա տնկարկների, տնկարանային տնտեսությունների, ինչպես նաև ռոռզման անձրևացման ստացիոնար համակարգով միամյա մշակաբույսերի մշակությամբ զբաղվող հողօգտագործողների համար ռոռզման ժամանակակից տեխնոլոգիաներ տեղադրելու նպատակով նախարարության կողմից սահմանված ժամկետում ռոռզման ժամանակակից տեխնոլոգիաներ տեղադրող լիցենզավորված ընկերությունները (այսուհետ՝

ընկերություններ) նախարարություն են ներկայացնում հայտ՝ համաձայն N 3 ձևի.

13) հանձնաժողովը փորձաքննության, իսկ սույն կետի 11-րդ ենթակետում նշված դեպքում նախահաշվի ուսումնասիրման արդյունքների հիման վրա տասնօրյա ժամկետում ընդհանրացնում և տալիս է եզրակացություն, միաժամանակ նախարարություն ներկայացնելով առաջարկություն՝ դրական եզրակացություն ստացած ռոռզման կաթիլային, ենթահողային և շիթային համակարգերով ծխախոտ, բանջարեղեն և այլ միամյա մշակաբույսեր, ինչպես նաև ռոռզման անձրևացման շարժական համակարգով այլ միամյա մշակաբույսեր, ռոռզման կաթիլային համակարգով 0,5 մինչև 1 հեկտար մակերեսով հողատարածքում նոր հիմնադրվող և (կամ) բարձր տարիքի բազմամյա տնկարկներ մշակող հողօգտագործողների ֆինանսավորման մասին՝ նշելով անհատույց տրամադրման ենթակա ֆինանսական միջոցների չափը.

14) նախարարությունը փորձաքննության արդյունքների հիման վրա տասնօրյա ժամկետում հիմնադրամ է ներկայացնում դրական եզրակացություն ստացած հողօգտագործողների ցանկը, նշելով՝

ա. ռոռզման կաթիլային, ենթահողային և շիթային համակարգերով ծխախոտի, բանջարեղենի և այլ միամյա մշակաբույսերի, ինչպես նաև ռոռզման անձրևացման շարժական համակարգով այլ միամյա մշակաբույսերի մշակության մասով՝ անտոկոս փոխառությամբ տրամադրման ենթակա գումարը,

բ. ռոռզման կաթիլային, ենթահողային և շիթային համակարգերով 1 և ավելի հեկտար նոր հիմնադրվող և մինչև 2 տարեկան բազմամյա տնկարկների, 3 և բարձր տարիքի բազմամյա տնկարկների, տնկարանային տնտեսությունների, ինչպես նաև անձրևացման ստացիոնար համակարգով այլ միամյա մշակաբույսերի մշակության մասով՝ անհատույց և (կամ) անտոկոս փոխառությամբ տրամադրման ենթակա գումարները.

15) սույն կետի 14-րդ ենթակետում նշված տեղեկությունների հետ միաժամանակ հիմնադրամ է ուղարկվում անտոկոս փոխառությամբ տրամադրված գումարների՝ մշակվող կուլտուրայի յուրահատկություններից կախված, վերադարձման ժամկետների կամ վաղաժամկետ մարման հնարավորության մասին տեղեկություններ՝ պետական աջակցության գործընթացն ապահովելու նպատակով.

16) ծխախոտի մշակության համար ռոռզման ժամանակակից տեխնոլոգիա տեղադրելու նպատակով անտոկոս փոխառությամբ տրամադրված գումարները ենթակա են վերադարձման մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 20-ը.

17) հիմնադրամը դրական եզրակացություն ստացած՝

ա. սույն կետի 14-րդ ենթակետի «ա» պարբերությունով նախատեսված կուլտուրաների մշակությամբ զբաղվող հողօգտագործողների հետ կնքում է անտոկոս փոխառության պայմանագրեր՝ նախատեսելով սույն կետի 15-րդ և 16-րդ ենթակետերով նախատեսված դրույթները,

բ. սույն կետի 14-րդ ենթակետի «բ» պարբերությունով նախատեսված կուլտուրաների մշակությամբ զբաղվող հողօգտագործողների և ընտրված ընկերությունների հետ տասնհինգօրյա ժամկետում կնքում է համապատասխան (եռակողմ) պայմանագրեր՝ նախատեսելով սույն կետի 15-րդ ենթակետով նախատեսված դրույթները.

18) հիմնադրամը սույն կետի 15-րդ և 16-րդ ենթակետերով նախատեսված գումարների լրիվ կամ մասնակի վերադարձման դեպքում՝ ապահովում է դրանց փոխանցումը պետական բյուջե.

19) նախարարությունը դրական եզրակացություն ստացած սույն կետի 13-րդ ենթակետում նշված կուլտուրաներ մշակող հողօգտագործողների հետ

կնքում է ֆինանսական միջոցների անհատույց տրամադրման պայմանագրեր.

20) հիմնադրամը յուրաքանչյուր ամիս, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը, նախարարություն է ներկայացնում տեղեկություններ իրականացրած աշխատանքների վերաբերյալ.

21) ընկերությունների կողմից ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների տեղադրման աշխատանքների ընդունումն իրականացվում է հիմնադրամի և Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծված համապատասխան հանձնաժողովի կողմից.

22) նախարարությունը հիմք ընդունելով սույն կետի 20-րդ ենթակետում նշված տեղեկությունները՝ կազմակերպում է մասնագիտական որակավորում ունեցող անձի կողմից պայմանագրային հիմունքներով օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցումը՝ պետական բյուջեով նախատեսված միջոցներով.

23) ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների ոչ նպատակային օգտագործման դեպքում դրանց արժեքները ենթակա են վերադարձման, ընդ որում՝ անտոկոս փոխառության մասով՝ վաղաժամկետ.

24) հիմնադրամը, յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո, բայց ոչ ուշ քան մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, նախարարություն է ներկայացնում տեղեկություններ՝ տրամադրված և վերադարձված ու պետական բյուջե փոխանցված գումարների մասին.

25) ոռոգման կաթիլային, ենթահողային և շիթային համակարգերով բանջարեղենի և այլ միամյա մշակաբույսերի մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների արժեքի 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության տրամադրումն իրականացվում է հիմնադրամի միջոցներով:».

2) 24-րդ կետի 1-ին ենթակետում «նռան այգի հիմնադրելու» բառերից հետո լրացնել «,ինչպես նաև արդեն հիմնադրված այգին ինտենսիվացնելու» բառերը.

3) N 2 «Բուսաբուծության զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող ներդրումները 2020 թվականի համար» աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

4) լրացնել նոր N 4 աղյուսակ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բուսաբուծության զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող ներդրումները 2020 թվականի համար

Հ/հ	Մշակաբույսի կամ միջոցառման անվանումը	Նախատեսվում է մշակել (հա)	Ցանցային կամ տնկման նորմա (կգ, հատ/հա)	Համախառն բերք (տ)	Անտառի փոխառության և անհատույց դրամական միջոցներ (ՀՀ դրամ)	Ապրանքանյութի պահանջը (կգ, հատ, ցանքի միավոր)	Ապրանքանյութի արժեքը (ՀՀ դրամ)	Անհատույց դրամական միջոցների կամ սպորտաշահութային տրամադրում (ՀՀ դրամ)	ՆԱԹ փորձարկման արժեք (ՀՀ դրամ)	Տեխ. հսկողություն (ՀՀ դրամ)	Լրավճար սերերի և բերքի վերահսկման արժեք (ՀՀ դրամ)	Պարարտանյութի քանակ (կգ)	որից՝		Ընդամենը ֆինանսական միջոցներ (ՀՀ դրամ)	որից՝		Մտուցվող արտադրանքի արժեքը (ՀՀ դրամ)
													մաքուր	կախված		ԱՆ 2020 թվականի պետական բյուջե		
																Բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի (ՀՀ դրամ)	Բազմակամային կերտային խոտաբույսերի մշակության (կորկոտ, արտադրանքի արժեքը) (ՀՀ դրամ)	
1	Գաթիլային համակարգ	400			509,200,000				2,000,000	12,000,000					523,200,000	523,200,000		
2	Եգիպտացորեն	500	20			10,000	21,000,000								21,000,000	21,000,000		
	Եգիպտացորեն (Պիոներ)	3820				3,820	248,300,000								248,300,000	192,910,000		55,390,000
3	Հնդկացորեն	2000	100			200,000	132,000,000								132,000,000	132,000,000		
4	Արևածաղիկ	2900	4			11,600	38,570,000					290,000	145,000	145,000	89,320,000	67,700,000		21,620,000
5	Սոյա	370	60			22,200	12,210,000					37,000	18,500	18,500	18,685,000	16,000,000		2,685,000
6	Կտավատ	4700	60			282,000	195,990,000					470,000	235,000	235,000	278,240,000	24,300,000		253,940,000
7	Սիսեռ	1300	100			130,000	135,200,000								135,200,000			135,200,000
8	Ոսպ	100	150			15,000	10,350,000								10,350,000	10,350,000		
9	Ոլոռ	1400	200			280,000	102,200,000								102,200,000	5,740,000		96,460,000
10	Լոբի	50	100			5,000	17,225,000								17,225,000			17,225,000
11	Կորնգան	1550	120			186,000	108,810,000								108,810,000		79,600,000	29,210,000
12	Աովոլյոտ	500	20			10,000	21,450,000								21,450,000		21,450,000	

13	Ծխախոտ			2500							25,000,000				25,000,000	25,000,000		
14	Բանջարե- ղեն և (կամ) լոբի և կամ) կարտոֆիլ	500						150,000,000							150,000,000	150,000,000		
15	Ջերմոցային տնտեսու- թյուն							16,800,000							16,800,000	16,800,000		
16	Նռան տնկիներ	400	625					37,500,000							37,500,000	37,500,000		
17	Այլ տնկիներ	100						42,500,000							42,500,000	42,500,000		
ընդամենը		20590		2500	509200000	1,155,620	1,123,305,000	166,800,000	2,000,000	12,000,000	25,000,000	797,000	398,500	398,500	1,977,780,000	1,265,000,000	101,050,000	611,730,000
»:																		

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Բազմամյա տնկարկների և միամյա մշակաբույսերի մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների տեղադրման պետական աջակցության տրամադրման չափանիշները

h/h	Մշակվող կուլտուրայի տեսակը	Մշակվող կուլտուրայի տարիքը	Մշակվող հողամասի մակերեսը	Ոռոգման ժամանակակից տեղնորոգիայի տեսակը	Աջակցության առավելագույն չափը 1-ին տարվա համար 1 հեկտարի հաշվարկով (բացառությամբ անձրևացման շարժական համակարգի)	Աջակցության ձևը 1-ին տարվա համար		Ֆինանսական միջոցներ տրամադրողը 1-ին տարվա համար		Ֆինանսավորման աղբյուրը 1-ին տարվա համար		Աջակցության առավելագույն չափը 2-րդ և հաջորդ տարիների համար 1 հեկտարի հաշվարկով	Աջակցության ձևը 2-րդ և հաջորդ տարիների համար	Ֆինանսական միջոցներ տրամադրողը 2-րդ և հաջորդ տարիների համար	Ֆինանսավորման աղբյուրը 2-րդ և հաջորդ տարիների համար
						անհատույց	անտոկոս փոխառություն	ԱՀ ԳԼ	ԼԴՀ ԳԳԱՀ	ԱՀ պետական բյուջե	ԼԴՀ ԳԳԱՀ միջոցներով				
1	Բազմամյա տնկարկներ	նոր հիմնադրվող և մինչև 2 տարեկան	1 և ավելի հեկտար	կաթիլային, ենթահողային, շիթային համակարգեր	1 500 000	50%	50%	-	եռակողմ պայմանագիր	100%	-	-	-	-	-
		3 ու բարձր տարիքի	1 և ավելի հեկտար	կաթիլային, ենթահողային, շիթային համակարգեր	1 500 000	-	100%	-	եռակողմ պայմանագիր	100%	-	-	-	-	-
		ցանկացած տարիքի	0,5 մինչև 1 հեկտար	կաթիլային համակարգ	800 000	70%	-	դրամաշնորհի պայմանագիր	-	100%	-	-	-	-	-
2	Տնկարանային տնտեսություն	-	1 և ավելի հեկտար	կաթիլային, ենթահողային, շիթային համակարգեր	2 000 000	50%	50%	-	եռակողմ պայմանագիր	100%	-	-	-	-	-
3	Ծխախոտ	-	1 և ավելի հեկտար	կաթիլային, ենթահողային, շիթային համակարգեր	1 500 000	50%	50%	50% դրամաշնորհի պայմանագիր	50% անտոկոս փոխառությամբ պայմանագիր	100%	-	500 000	100%	դրամաշնորհի պայմանագիր	100%
4	Բանջարեղեն	-	0,5 և ավելի հեկտար	կաթիլային, ենթահողային, շիթային համակարգեր	1 500 000	50%	50%	50% դրամաշնորհի պայմանագիր	50% անտոկոս փոխառությամբ պայմանագիր	50% դրամաշնորհ	50% անտոկոս փոխառություն	500 000	100%	դրամաշնորհի պայմանագիր	100%
5	Այլ միամյա մշակաբույսեր	-	1 և ավելի հեկտար	կաթիլային, ենթահողային, շիթային համակարգեր	1 500 000	50%	50%	50% դրամաշնորհի պայմանագիր	50% անտոկոս փոխառությամբ պայմանագիր	50% դրամաշնորհ	50% անտոկոս փոխառություն	500 000	100%	դրամաշնորհի պայմանագիր	100%
				անձրևացման ստացիոնար համակարգեր	1 500 000	50%	50%	-	եռակողմ պայմանագիր	50% դրամաշնորհ	50% անտոկոս փոխառություն	-	-	-	-
				անձրևացման շարժական համակարգեր	15 000 000	50%	50%	50% դրամաշնորհի պայմանագիր	50% անտոկոս փոխառությամբ պայմանագիր	50% դրամաշնորհ	50% անտոկոս փոխառություն	-	-	-	-

ԱՐՑԱՔԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 օգոստոսի 2020թ.

N 385-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 11-ի «Բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի ծախսերի որոշ մասի սուբսիդավորման կարգը հաստատելու մասին» N 57-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՌՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԾԱԽՍԵՐԻ ՈՐՈՇ ՄԱՍԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԳԱՋԱՖԻԿԱՑՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) որոշման առաջին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետ.

«1.1. Հաստատել Արցախի Հանրապետության չգազաֆիկացված բնակավայրերի ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի:».

3) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի ծախսերի որոշ մասի սուբսիդավորումն իրականացվում է՝

1) Արցախի Հանրապետության չգազաֆիկացված բնակավայրերում՝ էլեկտրաէներգիայի գործող սակագների և 15 ՀՀ դրամի տարբերության չափով.

2) Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Մ. Մաշտոց փողոցի N 7 շենքում՝ էլեկտրաէներգիայի գործող սակագների և 15 ՀՀ դրամի տարբերության չափով.

3) այլ բնակավայրերում՝ էլեկտրաէներգիայի գործող սակագների և 25 ՀՀ դրամի տարբերության չափով:».

բ. ենթահավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

4) որոշումը լրացնել նոր՝ N 1 հավելվածով՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ

Հ Ա Շ Վ Ա Ր Կ
**«ԱՐՑԱՊԵՆՆԵՐԳՈ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԻՉ-
ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ
ՍՈՒԲՄԻՂԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ**

Մասնաճյուղի անվանումը	0.38 ԿՎ լարմամբ սնվող սպառողների համար										
	Ցերեկ					Գիշեր					
	Բաժանորդների քանակը	Սպառված էլեկտրաէներգիայի քանակը (ԿՎտ/ժ)	Սակագնի տարբերու- թյունը		Գումարը (ՀՀ դրամ)	Բաժանորդների քանակը	Սպառված էլեկտրաէներգիայի քանակը (ԿՎտ/ժ)	Սակագնի տարբերությունը		Գումարը (ՀՀ դրամ)	Ընդամենը (ՀՀ դրամ)
			(գործող սակագին-15) (ՀՀ դրամ)	(գործող սակագին-25) (ՀՀ դրամ)				(գործող սակագին-15) (ՀՀ դրամ)	(գործող սակագին-25) (ՀՀ դրամ)		
«Արցախեներգո» փակ բաժնետիրական ընկերության «Կենտրոն» մասնաճյուղ											
«Արցախեներգո» փակ բաժնետիրական ընկերության «Բերդ» մասնաճյուղ											
«Արցախեներգո» փակ բաժնետիրական ընկերության «Մռավ» մասնաճյուղ											
«Արցախեներգո» փակ բաժնետիրական ընկերության «Դիզակ» մասնաճյուղ											
«Արցախեներգո» փակ բաժնետիրական ընկերության «Շուշի» մասնաճյուղ											
«Արցախեներգո» փակ բաժնետիրական ընկերության «Քաշաթաղ» մասնաճյուղ											
Ընդամենը											

Ծանոթություն _____

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ _____

ԻՐԱՅՄԱՆ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆ _____

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ _____

»:

**ԱՐՑԱՊԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի օգոստոսի 27-ի N 385-Ն որոշման

«Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության
2014 թվականի փետրվարի 11-ի N 57 -Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԳԱԶԱՖԻԿԱՑՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

Հ/Հ	Բնակավայրի անվանումը
1. ԱՄԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ	
1.	Քյաթուկ
2.	Արմենակավան
3.	Դահրավ
4.	Կարմիր գյուղ
5.	Ներքին Ազնեք
6.	Դահրազ
7.	Սարղարաշեն
8.	Վերին Ազնեք
9.	Ուղտասար
10.	Փառուխ
2. ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ	
1.	Վանք
2.	Տյաք
3.	Ակնաղբյուր
4.	Այգեստան
5.	Մեյիքաշեն
6.	Առաջամուղ
7.	Արաքսավան
8.	Առաքել
9.	Զորագյուղ
10.	Սարալանջ
11.	Արևշատ
12.	Բանաձոր
13.	Ցոր
14.	Թաղասեռ
15.	Թաղուտ
16.	Խանձաձոր
17.	Հայկավան
18.	Խճաբերդ
19.	Արփազետիկ
20.	Սպիտակաշեն
21.	Ծակուռի
22.	Ծամձոր
23.	Սարինշեն
24.	Կարմրակուճ
25.	Հակակու
26.	Հին Թաղեր
27.	Մարիամաձոր
28.	Մոխրենես
29.	Նորաշեն
30.	Պլեթանց
31.	Ծաղկավանք
32.	Ջրակուս
33.	Վարդաշատ
34.	Տումի
35.	Քյուրաթաղ
3. ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ	
1.	Գետավան
2.	Զագլիկ

3.	Զարդախաչ
4.	Թալիշ
5.	Թբղո
6.	Խնկավան
7.	Կիչան
8.	Կոճողոտ
9.	Կուսապատ
10.	Հաթերք
11.	Հարությունագոմեր
12.	Հովտաշեն
13.	Ճանկաթաղ
14.	Մատաղիս
15.	Մաղավուզ
16.	Քմքաձոր
17.	Մեծ շեն
18.	Մեհմանա
19.	Մոխրաթաղ
20.	Նոր Այգեստան
21.	Նոր Կարմիրավան
22.	Նոր Հայկաջուր
23.	Նոր Զրաբերդ
24.	Նոր Ղազանչի
25.	Նոր Մարաղա
26.	Նոր Սեյսուվան
27.	Չափար
28.	Պողոսագոմեր
29.	Վաղուհաս
30.	Վարդաձոր
31.	Վարնկաթաղ
32.	Վերին Հոռաթաղ
33.	Տոնաշեն
34.	Քոլատակ
4. ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ	
1.	Քաջավան
2.	Զարդանաշեն
3.	Խերխան
4.	Ծովատեղ
5.	Կաղարծի
6.	Կոլխոզաշեն
7.	Հաղորտի
8.	Կավահան
9.	Մամնա
10.	Մուշկապատ
11.	Ննգի
12.	Պառավաթումբ
13.	Մարգսաշեն
14.	Վարանդա
15.	Սխտորաշեն
5. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆ	
1.	Քարվաճառ
2.	Ակնաբերդ
3.	Դաղիվանք
4.	Եղեգնուտ
5.	Զուար
6.	Ծար
7.	Հավսաթաղ
8.	Ճումեն
9.	Նոր Բրաջուր
10.	Նոր Գետաշեն
11.	Նոր Էրքեջ
12.	Նոր Խարխափուտ
13.	Նոր Կարաչինար
14.	Նոր Մանաշիղ

15.	Նոր Վերինշեն
16.	Չարեքտար
17.	Քնարավան
18.	Չափնի
6. ՇՈՒՇԻՒ ՇՐՋԱՆ	
1.	Կանաչ Թալա
2.	Տասր վերստ
3.	Քիրսավան
4.	Ղայբալիշեն
7. ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆ	
1.	Կովսական
2.	Դիցմայրի
3.	Միջնավան
4.	Որոտան
5.	Ալաշկերտ
6.	Աղաձոր
7.	Աղանուս
8.	Ապարան
9.	Աղավնատուն
10.	Խաչգետիկ
11.	Հարար
12.	Աղավնո
13.	Այգեհովիտ
14.	Լճաշեն
15.	Այգեկ
16.	Արախիշ
17.	Հայթաղ
18.	Մովսեսաշեն
19.	Վազգենաշեն
20.	Արծվաշեն
21.	Մխանց
22.	Արտաշավի
23.	Գանձա
24.	Բազմատուս
25.	Գետամեջ
26.	Գետափ
27.	Գողթանիկ
28.	Դրախտաձոր
29.	Լեռնահովիտ
30.	Շրվական
31.	Սպիտակջուր
32.	Երիցվանք
33.	Ամիրյան
34.	Կրմեն
35.	Իշխանաձոր
36.	Ծաղկաբերդ
37.	Մարաթուկ
38.	Ծիծեռնավանք
39.	Մելիքաշեն
40.	Տանձուտ
41.	Արահուծ
42.	Որդուակ
43.	Կերեն
44.	Կումայրի
45.	Շիրակ
46.	Հակ
47.	Հակարի
48.	Հայկազյան
49.	Ջանֆիդա
50.	Հոչանց
51.	Ձորափ
52.	Ղազարապատ
53.	Մամարք

54.	Հալե
55.	Մարտունաշեն
56.	Միրիկ
57.	Մշենի
58.	Արվական
59.	Մոշաթաղ
60.	Հերիկ
61.	Բերդիկ
62.	Մուշ
63.	Նորաշենիկ
64.	Վարդուտ
65.	Շալուա
66.	Հիմնաշեն
67.	Վերին շեն
68.	Սարատակ
69.	Սոնասար
70.	Մարգիս
71.	Սուս
72.	Գիհուտ
73.	Ներքին Սուս
74.	Վակունիս
75.	Խաչինտափ
76.	Վաղագին
77.	Վան
78.	Վարդաբաց
79.	Քարտան
80.	Վուրգավան
81.	Տիգրանավան
82.	Ուռեկան
83.	Փակահան
84.	Քաշունիք
85.	Վերին Քաշունիք
86.	Քարեգահ

»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

28 օգոստոսի 2020թ.

N 390-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 7-ի «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության կանոնադրությունը, կառուցվածքը և աշխատողների թիվը հաստատելու ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 29-ի N 344-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ հաստատված N3 հավելվածի 1-ին կետի «536» և «459» թվերը փոխարինել «550» և «473» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

28 օգոստոսի 2020թ.

N 391-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1170-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Պետական անտառներում բնափայտի մթերման 2020 թվականի հաշվարկային հատատեղը հաստատելու մասին» N 1170-Ն որոշման 2-րդ կետում «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

28 օգոստոսի 2020թ.

N 392-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ա. Առաքելյան 1-ին փակուղի թիվ 1բ հասցեում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,0912 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

28 օգոստոսի 2020թ.

N 393-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Բեկզաղյան նրբանցք թիվ 1/1 հասցեում գտնվող, քաղաքացիների համատեղ սեփականություն հանդիսացող՝ բնակավայրերի նպատակային նշանակության 0,008741 հեկտար բնակելի կառուցապատման հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

28 օգոստոսի 2020թ.

N 394-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈԴԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 384 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Քոասնիի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,12 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Քոասնիի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

28 օգոստոսի 2020թ.

N 395-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 380 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Աստղաշենի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 1,0 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Աստղաշենի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

28 օգոստոսի 2020թ.

N 396-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 465 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Խնապատի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,06278 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Խնապատի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

28 օգոստոսի 2020թ.

N 397-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 155 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Հաղրույթի շրջանի Հաղրույթի քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,025985 հեկտար այլ հողատեսքերը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

28 օգոստոսի 2020թ.

N 398-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Գանձայի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 1,9952 հեկտար արոտավայրը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

28 օգոստոսի 2020թ.

N 399-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 61 որոշման 2-րդ կետով հաստատված պայմանագրերի օրինակելի ձևերում «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի աշխատակազմի» բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 23-ի «Փոստային կապի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմին ու փոստային կապի ազգային օպերատոր սահմանելու և փոստային կապի ազգային օպերատորին փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման լիազորություններ տալու մասին» N 348 որոշման 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման նախարարությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունը» բառերով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 27-ի «Լիազորված մարմին ճանաչելու մասին» N 968 որոշման

1) նախաբանից հանել ««Փոստային կապի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին և» բառերը.

2) 1-ին կետում «Փոստային կապի և էլեկտրոնային» բառերը փոխարինել «Էլեկտրոնային» բառով, իսկ «բնագավառներում» բառը փոխարինել «բնագավառում» բառով:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 23-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության աշխատանքների իրականացմանը ներկայացվող պարտադիր պահանջները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորման անցկացման կարգն ու պայմանները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորման վկայականի ձևը սահմանելու մասին» N 72-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ սահմանված N 1 հավելվածի՝

ա. 2-րդ կետի 1-ին ենթակետում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի» բառերով, իսկ 2-րդ ենթակետում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտե» բառերով,

բ. 4-րդ կետում և 5-րդ կետի 5-րդ ենթակետում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչությունից» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեից» բառերով.

2) որոշմամբ սահմանված N 2 հավելվածի՝

ա. 2-րդ կետում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեն» բառերով,

բ. 4-րդ կետում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտե» բառերով,

գ. 5-րդ կետում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի» բառերով, իսկ «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի (այսուհետ՝ նախարար)» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի (այսուհետ՝ կոմիտեի նախագահ)» բառերով,

դ. 7-րդ կետի 2-րդ ենթակետում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի» բառերով, իսկ 4-րդ ենթակետում «նախարարին» բառը փոխարինել «կոմիտեի նախագահին» բառերով,

ե. 10-րդ, 11-րդ կետերում և 12-րդ կետի 4-րդ ենթակետում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչություն» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտե» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով,

զ. 13-րդ կետի 1-ին ենթակետում, 16-րդ, 20-րդ, 23-րդ, 52-րդ, 66-րդ, 67-րդ, 68-րդ, 69-րդ և 72-րդ կետերում «նախարար» բառը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «կոմիտեի նախագահ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով,

է. 18-րդ կետում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի» բառերով,

ը. 70-րդ կետում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի» բառերով.

3) որոշմամբ սահմանված N 3 հավելվածի՝

ա. 3-րդ կետում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի» բառերով, իսկ «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի» բառերով,

բ. 4-րդ և 5-րդ կետերում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով,

գ. վկայականի ձևում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով, իսկ «ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «ԱՀ կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 19-ի «Նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 423-Ն որոշմամբ հաստատված պայմանագրերի օրինակելի ձևերում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի աշխատակազմի» բառերով:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 2-ի «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը լիազորություններ տալու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 18-ի N 206 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 765-Ն որոշման վերնագրում և տեքստում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 2-ի «Ընտանիքների կարիքավորության գնահատման «Արցախ» համակարգը ներդնելու մասին» N 712-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 4-րդ կետում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին» բառերով.

2) որոշմամբ հաստատված N 5 հավելվածի 6-րդ կետում «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի» բառերով:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 սեպտեմբերի 2020թ.

N 410-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 293-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 19-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը տրամադրվող՝ Հայաստանի Հանրապետության պետական բուհերում նպատակային անվճար տեղերի արդյունավետ օգտագործման մասին» N 293-Ն որոշմամբ հաստատված՝

1) N 2 հավելվածում՝

ա. 2-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«4) մեկ տարվա ընթացքում Արցախի Հանրապետության պետական բյուջե վճարել պետության կողմից կատարված ծախսերի հատուցում՝ Ուսումնական հաստատությունում տվյալ ծրագրով ուսուցման համար սույն պայմանագրի կնքման պահին սահմանված վճարի չափով, ուսման փաստացի տևողության ողջ ժամանակահատվածի համար, ինչպես նաև կրթաթոշակի ողջ ծավալով (եթե Ուսանող-շրջանավարտին վճարվում է կրթաթոշակ) և տուգանք՝ ուսման ընդհանուր վճարի չափով, եթե՝

ա. հեռացվում է Ուսումնական հաստատությունից,

բ. մշտական բնակություն հաստատելու նպատակով կամ ընտանեկան պայմաններից ելնելով տեղափոխվում է այլ պետություն,

գ. խախտում է սույն կետի 3-րդ ենթակետի դրույթները.»,

բ. 2-րդ կետի 5-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ ենթակետ.

«6) ինքնակամ ուսումը դադարեցնելու դեպքում, վճարել սույն պայմանագրի 2-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փոխհատուցումները, բացառությամբ ուսման ընդհանուր վճարի չափով սահմանված տուգանքից:».

գ. 5-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«5. Նախարարությունն իրավունք ունի պահանջել սույն պայմանագրի 2-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված փոխհատուցումները:».

2) N 4 հավելվածում՝

ա. 4-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«4. Նախարարությունն իրավունք ունի՝

1) իր հայեցողությամբ ընտրել Կազմակերպություն, որի հետ պետք է աշխատանքային պայմանագիր կնքի Դիմորդը.

2) սույն պայմանագրի 5-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված դեպքերում պահանջել Դիմորդից մեկ տարվա ընթացքում Արցախի Հանրապետության պետական բյուջե վճարել պետության կողմից կատարված ծախսերի հատուցում՝ Ուսումնական հաստատությունում տվյալ մասնագիտացման համար սույն պայմանագրի կնքման պահին սահմանված վճարի չափով, ուսման փաստացի տևողության ողջ ժամանակահատվածի

համար, ինչպես նաև կրթաթոշակի ողջ ծավալով (եթե Դիմորդին վճարվում է կրթաթոշակ) և տուգանք՝ ուսման ընդհանուր վճարի չափով.

3) սույն պայմանագրի 5-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված դեպքերում պահանջել Դիմորդից մեկ տարվա ընթացքում Արցախի Հանրապետության պետական բյուջե վճարել պետության կողմից կատարված ծախսերի հատուցում՝ Ուսումնական հաստատությունում տվյալ մասնագիտացման համար սույն պայմանագրի կնքման պահին սահմանված վճարի չափով, ուսման փաստացի տևողության ողջ ժամանակահատվածի համար, ինչպես նաև կրթաթոշակի ողջ ծավալով (եթե Դիմորդին վճարվում է կրթաթոշակ):»:

բ. 5-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«5) մեկ տարվա ընթացքում Արցախի Հանրապետության պետական բյուջե վճարել պետության կողմից կատարված ծախսերի հատուցում՝ Ուսումնական հաստատությունում տվյալ մասնագիտացման համար սույն պայմանագրի կնքման պահին սահմանված վճարի չափով, ուսման փաստացի տևողության ողջ ժամանակահատվածի համար, ինչպես նաև կրթաթոշակի ողջ ծավալով (եթե Դիմորդին վճարվում է կրթաթոշակ) և տուգանք՝ ուսման ընդհանուր վճարի չափով, եթե՝

ա. հեռացվում է Ուսումնական հաստատությունից,

բ. մշտական բնակություն հաստատելու նպատակով կամ ընտանեկան պայմաններից ելնելով տեղափոխվում է այլ պետություն,

գ. սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում չի ներկայանում Նախարարություն կամ հրաժարվում է աշխատանքային պայմանագիր կնքել Կազմակերպության հետ,

դ. մինչև սույն պայմանագրի 1-ին կետով նախատեսված ժամկետի լրանալն իր նախաձեռնությամբ լուծում է Կազմակերպության հետ կնքված աշխատանքային պայմանագիրը.»:

զ. 5-րդ կետի 6-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ ենթակետ.

«7) ինքնակամ ուսումը դադարեցնելու դեպքում, վճարել սույն պայմանագրի 5-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված փոխհատուցումները, բացառությամբ ուսման վճարի չափով սահմանված տուգանքից:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

4 սեպտեմբերի 2020թ.

N 414-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1160-Ն որոշման N 2 հավելվածի առաջին աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի օգոստոսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ. դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառուկան դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ				-
			այդ թվում՝				
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			(19868,0)	(19868,0)
	7		Այլ բնագավառներ	-	-	(19868,0)	(19868,0)
		3	Զբոսաշրջություն			(19868,0)	(19868,0)
		01	ԱՀ զբոսաշրջության զարգացման ծրագիրը)	-	-	(19868,0)	(19868,0)
			ԱՀ ռազմահայրենասիրության, երիտասարդության, սպորտի և զբոսաշրջության նախարարություն	-	-	(19868,0)	(19868,0)
08			ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	-	-	(3142,0)	(3142,0)
	1		Հանգստի և սպորտի ծառայություններ	-	-	(3142,0)	(3142,0)
		1	Հանգստի և սպորտի ծառայություններ	-	-	(3142,0)	(3142,0)
		02	Մարզական միջոցառումներ	-	-	(3142,0)	(3142,0)
			ԱՀ ռազմահայրենասիրության, երիտասարդության, սպորտի և զբոսաշրջության նախարարություն	-	-	(3142,0)	(3142,0)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶՂԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	-	-	23010,0	23010,0
	1		Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդեր	-	-	23010,0	23010,0
		1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	-	23010,0	23010,0
		01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	-	23010,0	23010,0
			ԱՀ կառավարություն	-	-	23010,0	23010,0

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

4 սեպտեմբերի 2020թ.

N 418-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 463 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Շոշի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ անտառային նպատակային նշանակության 1,3628 հեկտար անտառը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

4 սեպտեմբերի 2020թ.

N 419-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 646 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Չլդրանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 10,0 հեկտար անտառը, փոխադրել գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ վարելահողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

7 սեպտեմբերի 2020թ.

N 422-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 172-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 6-ի «Արցախի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Արցախի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 172-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ծառայությունը կազմված է ծառայության պետից, ծառայության պետի առաջին տեղակալից և տեղակալից, ծառայության պետի խորհրդականից, ծառայության պետի մամուլի քարտուղարից, ծառայության պետի օգնականից, ծառայության աշխատակազմից:».

2) 13-րդ կետում.

ա. «տեղակալ» բառից առաջ լրացնել «առաջին տեղակալ և» բառերը,

բ. «ում» բառը փոխարինել «որոնց» բառով.

3) 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. Պետի, նրա առաջին տեղակալի և տեղակալի պաշտոնները հայեցողական պաշտոններ են: Պետին անմիջական հաշվետու և ենթակա են պետի առաջին տեղակալը և տեղակալը, աշխատակազմի ղեկավարը, պետի խորհրդականը, պետի մամուլի քարտուղարը, պետի օգնականը և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:».

4) 17-րդ կետի.

ա. 3-րդ ենթակետում «իր» բառից հետո լրացնել «խորհրդականին» բառը և «,» կետադրական նշանը,

բ. 11-րդ ենթակետում «տեղակալի» բառից առաջ լրացնել «առաջին տեղակալի» բառերը և «,» կետադրական նշանը,

գ. 15-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) կարող է առանձին դեպքերում խորհրդականին և (կամ) օգնականին վերապահել պետի լիազորությունների իրականացման աջակցման որոշակի աշխատանքներ, ծրագրերի համակարգում, որի իրականացման համար խորհրդականը և (կամ) օգնականը իրավունք ունի (ունեն) կառուցվածքային ստորաբաժանումներից ստանալու տվյալ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն:».

դ. 17-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17) համապատասխան հրամանով առանձին բնագավառների, գործառույթների և դրանք ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգումը կարող է վերապահել իրեն, ինչպես նաև պետի առաջին տեղակալին և (կամ) տեղակալին. կատարում է աշխատանքային պարտականությունների բաշխում իր առաջին

տեղակալի, տեղակալի, խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների միջև.»

5) 18-րդ կետում «տեղակալը» բառից առաջ լրացնել «առաջին տեղակալը կամ» բառերը.

6) 19-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«19. Պետի առաջին տեղակալը և տեղակալը՝

1) համակարգում են աշխատանքներն իրենց հանձնարարված ոլորտներում.

2) իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում ծառայության կառուցվածքային ստորաբաժանումներին փոխանցում են պետի հանձնարարականները կամ իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս են հանձնարարականներ ու դրանց կատարման նկատմամբ իրականացնում են հսկողություն և արդյունքների մասին զեկուցում պետին.

3) իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում համագործակցում են աշխատակազմի ղեկավարի, այլ մարմինների և կազմակերպությունների հետ.

4) իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում պետին ներկայացնում են առաջարկություններ.

5) իրականացնում են պետի կողմից տրված ցուցումներն ու հանձնարարականները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

8 սեպտեմբերի 2020թ.

N 424-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 502-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի «Մեխանիկական եղանակով մատակարարվող ռոռզման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 54-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 502-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) **շահագործող-ջրօգտագործող**՝ իր գյուղատնտեսական արտադրությունը վարող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը սահմանված կարգով մեխանիկական եղանակով ռոռզման համար շահագործում է ջրամատակարարի կողմից չշահագործվող համակարգ, և գյուղատնտեսական մշակաբույսերի ռոռզումն իրականացնում է ռոռզման ժամանակակից ջրախնայողական տեխնոլոգիաներով (բացառությամբ բանջարաբուստանային մշակաբույսերի և խաղողի այգու) և (կամ) անասնապահական գործունեության իրականացման համար մեխանիկական ռոռզման համակարգից օգտագործում է ռոռզման ջուր.»

բ. 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) **ջրօգտագործող (հետագայում՝ բաժանորդ)**՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը գյուղատնտեսական մշակաբույսերի ռոռզումն իրականացնում է ռոռզման ժամանակակից ջրախնայողական տեխնոլոգիաներով (բացառությամբ բանջարաբուստանային մշակաբույսերի և խաղողի այգու) և (կամ) անասնապահական գործունեության իրականացման համար մեխանիկական ռոռզման համակարգից օգտագործում է ռոռզման ջուր և սահմանված կարգով հանդիսանում է ջրամատակարարի հետ ջրօգտագործման պայմանագիր կնքած անձ.»

2) աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Աղյուսակ

Ն Ո Ր Մ Ե Ր

**ԱՐՑԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐԱՅԻՆ ԳՈՏՈՒ
ՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ, ՄԻՋԻՆ ՀՁՈՐՈՒԹՅԱՆ, ՄԻՋԱԿ ԿԱՎԱ-ԱՎԱԶԱՅԻՆ
ԵՎ ԱՎԱԶԱ-ԿԱՎԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ ԳՑՈՒՂԱՏՆԵՄԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ
ՋՐՄԱՆ ՈՒ ՈՌՈԳՄԱՆ, ԱՆԱՄՆԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՎՈՂ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ**

Ծովի մակարդակից մինչև 500 մետր բարձրություն

Հ/հ	Մշակաբույսը	Ջրումների քանակը	Ջրման նորմը մ ³ /հա	Ոռոգման նորմը մ ³ /հա
1	Եգիպտացորեն	4	750	3000
2	Արևածաղիկ	5	700	3500
3	Կարտոֆիլ (վաղահաս)	5	650	3250
4	Ծխախոտ	12	650	7800
5	Բանջարաբուստանային	16	500	8000
6	Խաղողի այգի	5	1100	5500
7	Պտղատու այգի	5	1000	5000
Արաքսի հովիտ տեղամաս				
1	Խաղողի այգի	10	1100	11000
2	Պտղատու այգի	10	1000	10000

Ծովի մակարդակից 500-900 մետր բարձրություն

Հ/հ	Մշակաբույսը	Ջրումների քանակը	Ջրման նորմը մ ³ /հա	Ոռոգման նորմը մ ³ /հա
1	Եգիպտացորեն	3	750	2250
2	Արևածաղիկ	4	700	2800
3	Կարտոֆիլ (վաղահաս)	4	600	2400
4	Ծխախոտ	10	600	6000
5	Բանջարաբուստանային	12	450	5400
6	Խաղողի այգի	4	1100	4400
7	Պտղատու այգի	4	1000	4000

Ծովի մակարդակից 900 մետրից բարձր

Հ/հ	Մշակաբույսը	Ջրումների քանակը	Ջրման նորմը մ ³ /հա	Ոռոգման նորմը մ ³ /հա
1	Եգիպտացորեն	3	700	2100
2	Արևածաղիկ	3	700	2100
3	Կարտոֆիլ (վաղահաս)	4	550	2200
4	Ծխախոտ	6	550	3300
5	Բանջարաբուստանային	8	450	3600
6	Խաղողի այգի	-	-	-
7	Պտղատու այգի	3	1000	3000

Անասնապահական գործունեության իրականացում

Հ/հ	Անվանումը	Քանակը	Օրական մեկ պայմանական գլխի համար ջրի սպառման նորմը մ ³ /գլուխ	Ամսական կտրվածքով մեկ պայմանական գլխի համար ջրի սպառման նորմը մ ³ /գլուխ
1	Պայմանական անասնագլխաքանակ	1	0,1	3

»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

8 սեպտեմբերի 2020թ.

N 426-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N 29-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 6-ի «Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի մասին» N 29-Ն որոշման հավելվածի 17-րդ, 20-րդ և 21-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՋ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 սեպտեմբերի 2020թ.

N 432-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1160-Ն որոշման N 2 հավելվածի առաջին աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄԸ
ԵՎ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ
ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	-	-	-	-
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	2		Ծերություն	-	-	-	-
		1	Ծերություն	-	-	-	-
		02	Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ	-	-	-	1 000,0
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	-	-	-	1 000,0
		04	Օրենքով և ԱՀ Նախագահի հրամանագրով սահմանված կենսաթոշակներ և դրամական պարգևատրումներ	-	-	6 000,0	19 000,0
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	-	-	6 000,0	19 000,0
		06	Աշխատանքային կենսաթոշակներ	-	-	(6 000,0)	(20 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	-	-	(6 000,0)	(20 000,0)

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 սեպտեմբերի 2020թ.

N 433-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2004 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 339 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 28-ի «ԼՂՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Գեոդեզիայի, քարտեզագրման և հողաշինության նախագծային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը «Գեոդեզիայի, քարտեզագրության, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու, կանոնադրությունը հաստատելու և գույք հանձնելու մասին» N 339 որոշման 5-րդ կետում «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեին» բառերով, իսկ որոշման 2-րդ կետով հաստատված թիվ 1 հավելվածի 21-րդ կետում «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեն» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2020 թվականի օգոստոսի 27-ի

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի N 25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 43-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ և 24-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 37-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «ԼԵՎԵԼԷՆԵՐՁԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի հուլիսի 27-ի գրությունը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **որոշում է.**

1. Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 14-ի «ԼԵՎԵԼԷՆԵՐՁԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ԼՈՒՄԻՆ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 25-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետում, որոշման հավելվածի 3-րդ կետում և 3-րդ կետի 2-րդ ենթակետում «2036 թվականի մայիսի 14-ը» բառերը փոխարինել «2035 թվականի օգոստոսի 27-ը» բառերով.

2) որոշման 1-ին կետում և որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում «2021 թվականի մայիսի 14-ը» բառերը փոխարինել «2020 թվականի օգոստոսի 27-ը» բառերով.

3) որոշման հավելվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. «ԼՈՒՄԻՆ» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 4003 կիլովատտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով.

1) գեներատոր 1 հատ, AEM Dessau GmbH մակնիշի, 2020 թվականի արտադրության, 4003 կիլովատտ հզորությամբ.

2) հիդրոտուրբին 1 հատ, CINK Hydro-Energy k.s. մակնիշի, 2020 թվականի արտադրության, 4233 կիլովատտ հզորությամբ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի օգոստոսի 28-ին:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՅԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվականի օգոստոսի 27
ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2020 թվականի օգոստոսի 27-ի

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 71Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 45-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 24-ի «Ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների մատուցման սակագների մշակման մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 71Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, 1-ին կետում, որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ և 8-րդ կետերում «մեթոդաբանություն» բառի հոլովաձևերը փոխարինել «մեթոդիկա» բառի համապատասխան հոլովաձևերով.

2) որոշմամբ հաստատված հավելվածում՝

ա. վերնագրի «մեթոդաբանությունը» բառը փոխարինել «մեթոդիկա» բառով.

բ. 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն մեթոդիկան սահմանում է ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցող անձի (այսուհետ՝ Անձ) կողմից ջրօգտագործողների ընկերություններին, ջրօգտագործողների ընկերությունների միություններին և այլ ջրօգտագործողներին (այսուհետ՝ Մպառողներ) մատուցվող ծառայությունների սակագնային համակարգի մշակման սկզբունքները: Սույն մեթոդիկան չի տարածվում ջրօգտագործողների ընկերությունների, ջրօգտագործողների ընկերությունների միությունների, համայնքների, համայնքային բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից, ինչպես նաև բացառապես սեփական կարիքների համար ոռոգման ջրի մատակարարման հետ կապված հարաբերությունների վրա:».

գ. «Ընկերություն» բառի հոլովաձևերը փոխարինել «Անձ» բառի համապատասխան հոլովաձևերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվականի օգոստոսի 27

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2020 թվականի օգոստոսի 27-ի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 23-
Ի N 30Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 46-Ն

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 23-ի «Ֆեյբու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման սակագների մշակման մեթոդաբանությունը հաստատելու մասին» N 30Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, 1-ին կետում, որոշմամբ հաստատված հավելվածի վերնագրում, 1-ին, 2-րդ պարբերություններում, 6-րդ և 8-րդ կետերում «մեթոդաբանություն» բառը և դրա հոլովաձևերը փոխարինել «մեթոդիկա» բառով և դրա համապատասխան հոլովաձևերով.

2) որոշմամբ հաստատված հավելվածում՝

ա. 1-ին պարբերությունում «ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ)» բառերը փոխարինել «անձանց (այսուհետ՝ Անձինք)» բառերով.

բ. «Ընկերություններ» բառի հոլովաձևերը փոխարինել «Անձինք» բառի համապատասխան հոլովաձևերով.

գ. 2-րդ պարբերությունում «ջրային համակարգի օգտագործման թույլտվությամբ» բառերը փոխարինել «լիցենզիայով» բառով.

դ. 14-րդ կետում «Ծառայություններ մատուցող ջրային համակարգի օգտագործման թույլտվություն» բառերը փոխարինել «Ծառայությունների մատուցման լիցենզիա» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվականի օգոստոսի 27

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

2019 թվականի նոյեմբերի 05-ի

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 185
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 234-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2005 թվականի սեպտեմբերի 28-ի «Քաղաքացիական ծառայողի ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 185 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման նախաբանում՝ «օրենքի» բառից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը.

2) որոշմամբ սահմանված հավելվածի՝

ա. 6-րդ կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արցախի Հանրապետության պետական նախարարի, նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի արտահերթ ատեստավորումն անցկացվում է համապատասխանաբար պետական նախարարի, համապատասխան նախարարի, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի ղեկավարի (Ստեփանակերտի քաղաքապետի) պատճառաբանված որոշմամբ:».

բ. 7-րդ կետի 2-րդ պարբերությունից հանել «ԼՂՀ» հապավումը.

գ. 11-րդ կետից և Ձև N 1-ից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը.

դ. ամբողջ տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Բ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

«05» նոյեմբերի 2019թ.

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2019 թվականի նոյեմբերի 05-ի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի N 13
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 235-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի օգոստոսի 26-ի «Քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» N 13 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման նախաբանում «օրենքի» բառից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը.

2) որոշման 2-րդ կետի «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով.

3) որոշման հավելվածի՝

ա. 2-րդ կետից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը.

բ. 3-րդ կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արցախի Հանրապետության պետական նախարարի, նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի ատեստավորման դեպքում համակարգչում գետեղելու համար հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակներն առաջադրվում են նաև նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) կողմից:».

գ. 6-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) երկու թեկնածու՝ համապատասխան մարմնի ներկայացուցիչներ, իսկ Արցախի Հանրապետության պետական նախարարի, նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի ատեստավորումն անցկացնելու դեպքերում՝ նաև նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) ներկայացուցիչներ:».

դ. ամբողջ տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Բ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

«05» նոյեմբերի 2019թ.

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2019 թվականի նոյեմբերի 05-ի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 95 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 236-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի մարտի 30-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 95 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման նախաբանում՝ «օրենքի» բառից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը.

2) որոշմամբ սահմանված հավելվածի՝

ա. 4-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողի կողմից կարող է զբաղեցվել սույն կարգի 2-րդ կետի «դ» և «ե» ենթակետերով նախատեսված, ինչպես նաև վեց ամիսը չգերազանցող ժամկետով օրենքով նախատեսված այլ դեպքերում՝ մինչև վեց ամիս ժամկետով տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) հայեցողությամբ՝ նրա հրամանով (որոշմամբ)՝ մեկշաբաթյա ժամկետում:».

բ. 5-րդ կետի «ա» և «բ» ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա» սույն կարգի 2-րդ կետի «դ» և «ե» ենթակետերով նախատեսված, ինչպես նաև վեց ամիսը չգերազանցող ժամկետով օրենքով նախատեսված այլ դեպքերում՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) հայեցողությամբ՝ նրա հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) կնքելով (Ձևը կցվում է).

բ) սույն կարգի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված դեպքերում, ինչպես նաև վեց ամիսը գերազանցող ժամկետով սույն կարգի 2-րդ կետի «գ» ենթակետով և օրենքով նախատեսված այլ դեպքերում՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) կողմից նրա հետ Պայմանագիր կնքելով:».

գ. 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Սույն կարգի 5-րդ կետով նախատեսված դեպքերում (ընդ որում սույն կարգի 5-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքերում՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում) տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (մարմինը) զբավոր դիմում է Խորհուրդ՝ տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող սույն կարգով նախապատվություն ստացած կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողի կամ կադրերի երկարաժամկետ

ռեզերվում գրանցված անձի մասին տեղեկություններ ստանալու և նրա հետ Պայմանագիր կնքելու համար:».

դ. 11-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Սույն կարգի 9-րդ կամ 10-րդ կետով նախատեսված անձի մասին Խորհուրդը քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին (մարմին) տեղեկացնում է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ այդ մասին համապատասխան տեղեկություն հրապարակելով Խորհրդի աշխատակազմում տեսանելի ցուցանակի վրա, ինչպես նաև Խորհրդի պաշտոնական ինտերնետային կայքում:».

ե. 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Եթե տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցված անձի (անձանց) կողմից դիմում չի ներկայացվել կամ դիմում ներկայացրած կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցված անձը (անձինք) չի բավարարում տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները, ապա Խորհուրդը քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին (մարմին) երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է այդ մասին:».

զ. 14-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կարգի 13-րդ կետով նախատեսված տեղեկությունն ստանալուց հետո քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (մարմինը) կարող է մեկամսյա ժամկետում տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող մեկ այլ անձի հետ կնքել Պայմանագիր՝ հաշվի առնելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ, 12-րդ հոդվածները, 24-րդ հոդվածի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները:».

է. 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (մարմինը) սույն կարգի 11-րդ կետով նախատեսված տեղեկությունները ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, իսկ սույն կարգի 14-րդ կետով նախատեսված դեպքերում՝ մեկամսյա ժամկետում, Պայմանագիրը կնքում է երեք հավասարազոր օրինակից, որի առաջին օրինակը պահվում է համապատասխան մարմնում, երկրորդը՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է Խորհուրդ, իսկ երրորդը՝ նույն օրը տրվում է այն անձին, ում հետ կնքվել է Պայմանագիրը:».

ը. 16-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմին) կողմից մեկամսյա ժամկետում տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող մեկ այլ անձի հետ Պայմանագիր չկնքելու, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետով նախատեսված տեղեկությունն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում սույն կարգի 9-րդ կամ 10-րդ կետով նախատեսված անձի համապատասխան մարմին չներկայանալու կամ համապատասխան մարմին սահմանված ժամկետում ներկայանալուց հետո քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը Պայմանագրով զբաղեցնելուց հրաժարվելու դեպքում համապատասխան մարմինը եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է Խորհրդին:».

թ. 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. Պայմանագրի ժամկետը, մինչև սույն կարգի 18-րդ կետով նախատեսված հիմքերից մեկի առաջացումը, կարող է երկարաձգվել քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի կամ դրա վերացման ժամկետի փոփոխման դեպքում՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) և այն անձի համաձայնությամբ, ում հետ կնքվել է Պայմանագիրը:».

ժ. 18-րդ կետի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կետի «դ» ենթակետով նախատեսված ժամկետները կարող են երկարաձգվել քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) հայեցողությամբ:».

ժա. ամբողջ տեքստում՝ Բացառությամբ կցված Ձևի 6-րդ կետի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Բ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

«05» նոյեմբերի 2019թ.

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2019 թվականի նոյեմբերի 05-ի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԵԼԻ 26-Ի N 10 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 237-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի ապրիլի 26-ի «Քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» N 10 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման նախաբանում՝ «օրենքի» բառից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը, իսկ որոշման 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով.

2) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 2-րդ կետում՝ «օրենքով» բառից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը.

բ. 3-րդ կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արցախի Հանրապետության պետական նախարարի, նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու դեպքերում համակարգչում զետեղելու համար Հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակներն առաջադրվում են նաև նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) կողմից»:

գ. 6-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ) երկու թեկնածու՝ համապատասխան մարմնի ներկայացուցիչներ, իսկ Արցախի Հանրապետության պետական նախարարի, նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու դեպքում նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) ներկայացուցիչներ»:

դ. ամբողջ տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Բ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

«05» նոյեմբերի 2019թ.

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

2019 թվականի նոյեմբերի 05-ի

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 8
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 238-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի ապրիլի 26-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 8 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման նախաբանում «օրենքի» բառից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը.

2) որոշմամբ սահմանված հավելվածի՝

ա. 2¹-ին կետից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը.

բ. 67-րդ կետի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված կարգով և ժամկետում Արցախի Հանրապետության պետական նախարարի, նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի պաշտոնում մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ եզրակացությունն ուղարկվում է համապատասխանաբար պետական նախարարին, նախարարին, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի ղեկավարին և շրջվարչակազմի ղեկավարին (Ստեփանակերտի քաղաքապետին): Պետական նախարարը, համապատասխան նախարարը, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի ղեկավարը (Ստեփանակերտի քաղաքապետը) մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներից մեկի վերաբերյալ՝ հիմնավորմամբ, երեք աշխատանքային օրվա ընթացքում առաջարկություն է ներկայացնում աշխատակազմի ղեկավարի պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին (մարմին), որն առաջարկությունն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, ընդունում է պաշտոնում նշանակելու մասին որոշում:».

գ. 75-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գրավոր բողոքի բացակայության դեպքում սույն կարգի 67-րդ կետով նախատեսված եզրակացությունը, իսկ գրավոր բողոքի առկայության դեպքում եզրակացությունը և Խորհրդի սույն կարգի 66¹-րդ կետի յոթերորդ պարբերությամբ նախատեսված որոշումը (որոշումները) տալու օրը մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցները տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին, իսկ Արցախի Հանրապետության պետական նախարարի, նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և

շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցները՝ համապատասխանաբար պետական նախարարին, նախարարին, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի ղեկավարին և շրջվարչակազմի ղեկավարին (Ստեփանակերտի քաղաքապետին) ներկայացնում են՝

ա) դիմում.

բ) լրացված անձնական թերթիկ.

գ) ինքնակենսագրություն.

դ) իրենց կրթության և գիտելիքների մակարդակը հավաստող այլ փաստաթղթեր:».

դ. 76-րդ կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պետական նախարարը, համապատասխան նախարարը, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի ղեկավարը (Ստեփանակերտի քաղաքապետը) մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներից մեկի վերաբերյալ՝ հիմնավորմամբ, երեք աշխատանքային օրվա ընթացքում առաջարկություն է ներկայացնում աշխատակազմի ղեկավարի պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին (մարմին), որն առաջարկությունն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, ընդունում է պաշտոնում նշանակելու մասին որոշում:».

ե. ամբողջ տեքստում, բացառությամբ 15-րդ կետի «գ» ենթակետի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Բ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

«05» նոյեմբերի 2019թ.

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

2019 թվականի նոյեմբերի 05-ի

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի N 134
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 239-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2007 թվականի օգոստոսի 7-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղելու կարգը սահմանելու մասին» N 134 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման նախաբանում և որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 3-րդ կետում «օրենքի» բառից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը.

2) որոշման N 2 հավելվածի՝

ա. 2-րդ կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կետով նախատեսված դեպքերում Արցախի Հանրապետության պետական նախարարի, նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի գործուղումը, նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) և Խորհրդի համաձայնությամբ, համապատասխանաբար իրականացնում են պետական նախարարը, համապատասխան նախարարը, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի ղեկավարը (Ստեփանակերտի քաղաքապետը)»:

բ. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Սույն կարգի 2-րդ կետի «ա» ենթակետով Արցախի Հանրապետության պետական նախարարի, նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի գործուղման դեպքում, մինչև գործուղման վերաբերյալ որոշում կայացնելը, գրավոր դիմում են նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին (մարմնին) և Խորհրդին ներկայացնելով գործուղման հիմքերը (գործուղման ծրագրերը, հրավերքը և այլն) համաձայնություն ստանալու համար՝ համապատասխանաբար պետական նախարարը, համապատասխան նախարարը, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի ղեկավարը (Ստեփանակերտի քաղաքապետը):

Սույն կարգի 2-րդ կետի «բ» ենթակետով Արցախի Հանրապետության պետական նախարարի, նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի գործուղման դեպքում մինչև այդ մասին որոշում կայացվելը, առնվազն 15 օր առաջ, գրավոր դիմում

են նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին (մարմնին) և Խորհրդին՝ ներկայացնելով գործուղման հիմքերը (գործուղման ծրագրերը, հրավերքը և այլն) համաձայնություն ստանալու համար՝ համապատասխանաբար պետական նախարարը, համապատասխան նախարարը, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի ղեկավարը (Ստեփանակերտի քաղաքապետը)»:

գ. 9-րդ կետում «օրենքի» բառից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը:

3) որոշման N 1, N 2 հավելվածների ամբողջ տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Բ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

«05» նոյեմբերի 2019թ.

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«7» սեպտեմբերի 2020թ.

№ 250-Ա

ք. Ստեփանակերտ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄՈՒՐԱԴ ՄԻՇԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՏՐՎԱԾ
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և անհատ ձեռնարկատեր Մուրադ Միշայի Գրիգորյանի դիմումը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ`

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից 2012 թվականի սեպտեմբերի 3-ին **ընտանեկան ստոմատոլոգիական** գործունեության համար անհատ ձեռնարկատեր Մուրադ Միշայի Գրիգորյանին տրված թիվ Ա-XX-000199 լիցենզիան:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ. Հովհաննիսյանին`

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) անհատ ձեռնարկատեր Մուրադ Միշայի Գրիգորյանի լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Ա. ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«24» օգոստոսի 2020թ.

N 129

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ
ԱՎՏՈՄՈՒԲԻԼՆԵՐՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈՒՄԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ ՏՐԱՄԱՐԵԼՈՒ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 24-ի N366-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Տրամադրել՝ անհատ ձեռնարկատեր Ասծատուր Վալերիի Սարգսյանին Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով միջպետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՄՊՏՈՆ00767 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր:

2. Դադարեցնել՝ անհատ ձեռնարկատեր Ասծատուր Վալերիի Սարգսյանի Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00251 լիցենզիայի գործողությունը:

3. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

07 օգոստոսի 2020թ.

N 342-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 06.08.2020թ. եզրակացությունը (կցվում է) և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերության պահանջներով,

հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Ներքոնշյալ ընկերություններին տրամադրել լիցենզիաներ՝ ԱՀ տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար:

N	Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը	Գործունեության տեսակը
1	«ԲԻ ՄԻ ՋԻ» ՍՊԸ ք. Ստեփ., Գ Նժդեհ փող. 46	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական
2	«ՎԵՍՍ» ՍՊԸ ք. Ստեփ., Ա Մկրտչյան փող. 2 14բ/4	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ հիդրոտեխնիկական
3	«Ս. Հ. Ս. ԳՐՈՒՊ» ՍՊԸ Քաշաթաղի շրջան, ք. Բերձոր, 1-ին թաղամաս, տուն 14	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական
4	«ՀՈՉԱՆՑ» ՍՊԸ Քաշաթաղի շրջան, ք. Բերձոր, 5-րդ թաղամաս, տուն 83	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակարանային կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի վրա:

ՆԱԽԱՐԱՐ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

07 օգոստոսի 2020թ.

N 343-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության լիցենզավորող հանձնաժողովի 06.08.2020թ. եզրակացությունը և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի և 7-րդ կետի պահանջներով,

հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Դադարեցնել ներքոնշյալ ընկերություններին տրամադրած լիցենզիաների գործունեությունը՝

N	Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը	Լիցենզիայի համարը	Քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակը
1	«ՀԱԿԱՐԲ» ՍՊԸ ք. Ստեփ., Դանիելյան փող., տուն 17	ՇԻ-960	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ հիդրոտեխնիկական
2	«ՀԱՅԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ» ՍՊԸ ք. Ստեփ., Մ. Դավթի 52/25	ՇԻ-990	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ էներգետիկ
3	«ՀԱՅԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ» ՍՊԸ ք. Ստեփ., Մ. Դավթի 52/25	ՇԻ-626	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ տրանսպորտային

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակ-կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի պետ Գ. Գրիգորյանի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

14 օգոստոսի 2020թ.

N 354-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի **13.08.2020թ.** եզրակացությունը (կցվում է) և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերության պահանջներով,

հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Ներքոնշյալ ընկերություններին տրամադրել լիցենզիաներ՝ ԱՀ տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար:

N	Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը	Գործունեության տեսակը
1	«ԱՐ ՄՈՆՏԱԺ» ՍՊԸ ք. Ստեփ., Մ Մաշտոցի 3/10	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ հիդրոտեխնիկական
2	«ԿԱՊԻՏԱԼ ՍՏՐՈՅ» ՍՊԸ ք. Ստեփ., Վ. Սարոյան 43/1	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակարանային կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի պետ Գ. Գրիգորյանի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

28 օգոստոսի 2020թ.

N 372-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 27.08.2020թ. եզրակացությունը (կցվում է) և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերության պահանջներով,

հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Ներքոնշյալ ընկերություններին տրամադրել լիցենզիաներ՝ ԱՀ տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար:

N	Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը	Գործունեության տեսակը
1	«ՊՐՈՖ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ ք. Ստեփ., Սախարովի 21	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական
2	«ԱՐ-ՍՏՐՈՅ» ՍՊԸ ք. Ստեփ., Հեքիմյան փող. շենք 8ա/33	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական
3	«ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ ք. Ստեփ., Նաբերեժնայա 3-	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ հիդրոտեխնիկական
4	րդ նրբ. շ. 35/2	Որակի տեխնիկական հսկողություն, ըստ հետևյալ ոլորտի՝ հիդրոտեխնիկական
5	«ՍՔԵՅԼ» ՍՊԸ ք. Ստեփ., Հեքիմյան 14բ/25	Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական
6	«ԴԱ ԳՐՈՒՊ» ՓԲԸ ք. Ստեփ., Վաղարշյան 2-րդ նրբ. տուն 1	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակարանային կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի պետ Գ. Գրիգորյանի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

28 օգոստոսի 2020թ.

N 373-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության լիցենզավորող հանձնաժողովի 27.08.2020թ. եզրակացությունը և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի և 7-րդ կետի պահանջներով,

հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Դադարեցնել ներքոնշյալ ընկերություններին տրամադրած լիցենզիաների գործունեությունը՝

N	Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը	Լիցենզիայի համարը	Քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակը
1	«Շտիրլից և Կ ^օ » ՍՊԸ ք. Հաղրուք, Գ.Նժդեհ 7	ՇԻ-324	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ հիդրոտեխնիկական
2	«ԳՈԼԴ ԼԱՅԹ» ՍՊԸ ք.Ստեփ., Ս.Դավիթ 56/42	ՇԻ-827	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակ-կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի պետ Գ. Գրիգորյանի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի մայիսի 11-ի որոշումներով քաղաքացիական գործով նշանակվել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, և գործի վարույթը կասեցվել:

Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի մայիսի 31-ին որոշում է կայացրել գործի վարույթը վերսկսելու և գործը դատական քննության նշանակելու մասին:

Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 25-ի վճռով Լաուրիկ Դեմիրճյանի հայցը բավարարվել է մասնակի. Հ.Գրիգորյանից հոգուտ Լ.Դեմիրճյանի բռնագանձվել է 757.200 (յոթ հարյուր հիսունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ որպես գույքի անբաժանելի բարելավման համար կատարված ծախս:

Նշված վճռի դեմ պատասխանողը 2018 թվականի հոկտեմբերի 22-ին ներկայացրել է վերաքննիչ բողոք:

ԱՀ վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2018 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատական քննության:

Վերաքննիչ դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 4-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

Առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Ն.Հովհաննիսյան) 2019 թվականի հունվարի 15-ի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և հրավիրվել նախնական դատական նիստ:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի մարտի 22-ի որոշմամբ քաղաքացիական գործով նշանակվել է դատաշինարարատեխնիկական և ապրանքագիտական համալիր փորձաքննություն, իսկ նույն օրվա մեկ այլ որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է, իսկ 2019 թվականի հունվարի 29-ի որոշմամբ քաղաքացիական գործը նշանակվել է դատական քննության:

Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի մարտի 4-ի վճռով Լ.Դեմիրճյանի հայցը բավարարվել է մասնակի՝ վճռվել է Հակոբ Մերյոժայի Գրիգորյանից հոգուտ Լաուրիկ Հայկարամի Դեմիրճյանի գանձել 616.950 (վեց հարյուր տասնվեց հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ որպես առջինն զործարքով ստացվածի արժեք:

Նշված վճռի դեմ պատասխանողի ներկայացուցիչ Ատլեն Մկրտումյանը 2020 թվականի մարտի 25-ին ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ դատարանի 2020 թվականի հունիսի 1-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է. Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի մարտի 4-ի վճիռը մասնակիորեն բեկանվել ու փոփոխվել է. Լաուրիկ Հայկարամի Դեմիրճյանի հայցն ընդդեմ Հակոբ Մերյոժայի Գրիգորյանի՝ 2.300.000 ՀՀ դրամ գումար գանձելու պահանջի մասին, մերժվել: Որոշվել է Լ.Դեմիրճյանից հոգուտ Արցախի Հանրապետության գանձել 46.000 ՀՀ դրամ, հոգուտ Հ.Գրիգորյանի՝ 103.644 ՀՀ դրամ (որից 33.644 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքների համար վճարված պետական տուրք, և 70.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար), հոգուտ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական փորձաքննությունների լաբորատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության 158.700 ՀՀ դրամ՝ որպես փորձաքննության համար վճարման ենթակա գումար:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2020 թվականի հուլիսի 2-ին վճռաբեկ բողոք է բերել հայցվոր Լ.Դեմիրճյանը:

Գերագույն դատարանի 2020 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը բերվել է դատավարական և նյութական իրավունքների նորմերի խախտումների հիմքերով:

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Բողոքում նշվել է, որ ստորադաս դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ, 43-րդ, 44-րդ, 47-49-րդ և 113-րդ հոդվածների պահանջները, ինչի արդյունքում սխալ է մեկնաբանել ու կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1056-րդ, 1092-րդ, 562-րդ, 563-րդ, 300-րդ, 302-րդ, 304-րդ հոդվածների պահանջները, չի կիրառել կիրառման ենթակա այն իրավանորմերը, որոնց ընտրության և կիրառության պարտականությունը դրված է դատարանի վրա, ուստի և կայացված դատական ակտը չի բխում ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-123-րդ հոդվածների պահանջներից: Բողոքարկվող որոշմամբ արտահայտված դիրքորոշումը չի բխում նաև ԸԻԴ/1176/02/17 քաղաքացիական գործով Վերաքննիչ և Գերագույն դատարանների, ԸԻԴ/1601/02/13 քաղաքացիական գործով՝ Գերագույն դատարանի դիրքորոշումներից:

Նշված պնդումը բողոքաբերը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

2010թ. մարտ ամսին իր և պատասխանողի միջև կնքվել է առուվաճառքի պայմանագիր, որով գնել է պատասխանողին պատկանող բնակելի տունը: ԸԻԴ/2295/02/13թ. քաղաքացիական գործով դատարանը նշված պայմանագիրն համարել է առոչինչ ու որոշել իրեն վտարել նշված տնից, իսկ իր կողմից վճարված 800 ԱՄՆ դոլարը վերադարձնել իրեն, որն առ այսօր չի վճարվել: Ինքն իր միջոցներով տան վրա կատարել է անհրաժեշտ բարելավումներ, որոնց համար ծախսել է 2.300.000 ՀՀ դրամից ավել գումար, իսկ փորձագետի եզրակացության համաձայն՝ տան վրա կատարված ծախսը կազմել է 616.950 ՀՀ դրամ:

Շարադրելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1056-րդ հոդվածի բովանդակությունը, բողոքաբերը փաստել է. թեև ինքը պարտավոր չէ իր պահանջում նշել որևէ հոդված, կիրառելի է համարել հիշատակված իրավանորմը և անհիմն հարստացմանը վերաբերող նորմերն ու պահանջել նշված գույքի բարելավման համար կատարված ծախսը: Թե իր կատարած աշխատանքները հանդիսանում են անհիմն հարստացում, վնաս, գույքի ապօրինի տիրապետումից հետ պահանջելիս կիրառվող անհրաժեշտ ծախս (քաղաքացիական օրենսգրքի 276-րդ հոդված), դա արդեն դատարանի որոշման խնդիրն է, ելնելով հայցի հիմքից և առարկայից կիրառման ենթակա օրենսդրությունը որոշելու և կիրառելու դատարանի պարտականությունից: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը 1056-րդ հոդվածի բովանդակությունից հետևություն է արել, որ «որպես պարտադիր պայման, պետք է այդ անձի մոտ առկա լինի ի շահ իրեն գործելու մասին սխալ պատկերացում կամ ենթադրություն»: Գտնում է, որ իր արարքը և արածը ենթադրում է սխալ պատկերացում կամ ենթադրություն, երբ որ գումարի մեծ մասը վճարել է թղթով՝ չիմանալով դրա հետևանքն ու ենթադրելով, որ մեկ է տունն իրենն է և սկսել բարելավման աշխատանքները:

Ըստ բողոքի՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ինչպես բարեխիղճ, այնպես էլ անբարեխիղճ տիրապետողն իր հերթին իրավունք ունի սեփականատիրոջից պահանջել գույքի վրա իրենց կատարած անհրաժեշտ ծախսերը՝ գույքից ստացված եկամուտները սեփականատիրոջը հասնելու պահից: Ինքը, վճարելով 800 ԱՄՆ դոլար, իրեն սխալմամբ համարել է բարեխիղճ ձեռքբերող, այնինչ դատարանը 2014թ. վճռով համարել է անբարեխիղճ ձեռքբերող, բայց երկու դեպքում էլ օրենքը

սահմանում է, որ ինքը կարող է պահանջել կատարված անհրաժեշտ ծախսերը, ու պահանջել է՝ դրանք համարելով անհիմն հարստացում: Բողոքաբերի պնդմամբ՝ թիվ ԸԲԴ/0528/02/11 քաղաքացիական գործով Գերագույն դատարանի առ 05.06.2012թ. որոշումը կայացված է համանման հիմքեր ունեցող հայցով:

Բողոքաբերը, վկայակոչելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 3-րդ հոդվածների, 44-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 122-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերի, 43-րդ, 45-րդ հոդվածների 1-ին մասերի, 47-րդ, 113-րդ հոդվածների, 121-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, հանգել է այն եզրակացության, որ ստորադաս դատարանը վեճը չի լուծել ԸԲԴ/1601//02/13 քաղաքացիական գործով Գերագույն դատարանի արտահայտած դիրքորոշմանը համահունչ: Ի խախտումն Գերագույն դատարանի նախկինում կայացրած մի շարք որոշումներում արտահայտած դիրքորոշումների, ստորադաս դատարանը չի պարզել հայցի հիմքը, գործի փաստերը, կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ուստի և սահմանափակվել է գուտ հայցվորի դիրքորոշմամբ, որը կարող է տարբերվել դատական պրակտիկայից կամ դատարանի դիրքորոշումից, և որոշել է հայցը մերժել՝ ավելի ծանր նյութական դրության մեջ դնելով իրեն: Ինքն ապացուցել է, որ աշխատանքներ է կատարել իր բնակվելու ժամանակ, և փորձագետը հաստատել է դրանք (սակայն գումարային տարբերությամբ):

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերը, վկայակոչելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ, 241-րդ, 247-րդ հոդվածները, ԱՀ դատական օրենսգրքի 26-րդ հոդվածը, հիմնավորել է նրանով, որ գործի էությունը և բողոքում բարձրացված հարցերը, այդ թվում նույն հիմքեր ունեցող գործերով Գերագույն դատարանի որոշումներին սույն գործով կայացված որոշման չհամապատասխանությունը, պահանջում են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը, քանի որ ստորադաս դատարաններն առերևույթ սխալներ են թույլ տվել (նյութական և դատավարական իրավունքի տեսանկյունից), որոնք հանգեցրել են գործի սխալ լուծմանը: Բողոքաբերի կարծիքով՝ դատարանն անհիմն է կիրառել և սխալ մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1056-րդ, 1092-րդ հոդվածներով սահմանված իրավանորմերը ու չի կիրառել կիրառման ենթակա իրավահարաբերության պահին գործած ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 276-րդ հոդվածը:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.06.2020թ. որոշումը և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի 04.03.2020թ. վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման թիվ 003664 առ 04.01.2002թ. վկայականի համաձայն՝ ԱՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի 6-րդ թաղամասի 17-րդ տունը սեփականության իրավունքով պատկանում է պատասխանող Հ.Գրիգորյանին (հատոր 1-ին, գ.թ. 46):

2. Հայցվոր Լ.Դեմիրճյանի, Տ.Գրիգորյանի և Հ.Գրիգորյանի միջև 2010թ. մարտ ամսին կնքվել է սեփականության իրավունքով Հ.Գրիգորյանին պատկանող Բերձոր քաղաքի 6-րդ թաղամասի 17-րդ տան (այսուհետ նան՝ բնակելի տուն) առուվաճառքի պայմանագիր: Բնակելի տան դիմաց պայմանավորված 1.000 (հազար) ԱՄՆ դոլար գնից Լ.Դեմիրճյանը վճարել է 800 (ութ հարյուր) ԱՄՆ դոլար:

3. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2014 թվականի մայիսի 21-ի օրինական ուժի մեջ մտած վճռով Բերձոր քաղաքի 6-

րդ թաղամասի 17-րդ տունը Լաուրիկ Դեմիրճյանի ապօրինի տիրապետումից հետ է վերադարձվել Հակոբ Գրիգորյանին, և, որպես առոչինչ գործարքի (որը կնքվել է հասարակ գրավոր ձևով և չի ստացել պետական գրանցում) անվավերության հետևանք, Հ.Գրիգորյանից հոգուտ Լ.Դեմիրճյանի բռնագանձվել է 800 ԱՄՆ դոլար (հատոր 1-ին, գ.թ.13):

4. Հայցվոր Լ.Դեմիրճյանը 07.11.2016թ. ընդդեմ Հ.Գրիգորյանի հայց է ներկայացրել դատարան՝ խնդրելով պատասխանողից բռնագանձել 2.300.000 ՀՀ դրամ՝ որպես նշված բնակելի տան բարելավման համար կատարված ծախս (անհիմն հարստացման գումար):

5. Հայցվորը բնակելի տան վրա կատարել է շինարարական աշխատանքներ, որոնք հաստատվում են նրա ցուցմունքներով, գործում առկա գրավոր վկայություններով (համաձայն որոնց՝ 2010թ. բնակելի տունը գտնվում էր վթարային վիճակում, Լ.Դեմիրճյանի կողմից կատարվել են շինարարական մեծ աշխատանքներ, որպեսզի տունը դառնա բնակելի), դատաշինարարատեխնիկական փորձաքննության արդյունքում փորձագետի կողմից 2019 թվականի նոյեմբերի 14-ին տրված եզրակացությամբ, համաձայն որի՝ Բերձոր քաղաքի 6-րդ թաղամասում տեղակայված թիվ 17 բնակելի տան վրա կատարված շինարարական աշխատանքների ծավալը ֆիզիկական մշակվածության ներառմամբ գումարային տեսքով կազմում է 596.750 ՀՀ դրամ, իսկ բնակելի տան ճանապարհի հարթեցման աշխատանքների ծավալը՝ 20.200 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 616.950 ՀՀ դրամ (հատոր 2-րդ, գ.թ.36-48), տեղազննության արձանագրությամբ:

6. Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասը և հայցը մասնակիորեն բավարարել, և որ իրավահարաբերության ծագման պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1056-րդ հոդվածը սույն գործով կիրառելի չէ, քանի որ Առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցներով չի հաստատվել այն փաստը, որ հայցվորը բարելավումներ կատարելիս ենթադրել է, որ գործում է ի շահ իրեն:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Գերագույն դատարանը, վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի բողոքարկված որոշումը, գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել. Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի վճռին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԱՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ԱՀ դատական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասը նույնպես ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Գերագույն դատարանի առջև բարձրացվել են հետևյալ իրավական հարցերը. 1) առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման արդյունքում մյուս կողմին (սեփականատիրոջը) վերադարձման ենթակա բնակելի տան վրա

կատարված անանջատելի բարելավումների արժեքը (ծախսերը) ենթակա է արդյոք հատուցման, և Առաջին ատյանի դատարանը ճիշտ է արդյոք կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, թե պետք է կիրառեր ապօրինի տիրապետումից գույքը վերադարձնելիս հաշվարկները սահմանող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ (նախկինում գործող քաղաքացիական օրենսգրքի 276-րդ) հոդվածի կարգավորումները, 2) Վերաքննիչ դատարանը ճիշտ է արդյոք սույն գործով մեկնաբանել իրավահարաբերության ծագման պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1056-րդ հոդվածը (ներկայումս գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1059-րդ հոդված), 3) գործով ձեռք բերված ապացույցները բավարար են արդյոք հայցը մասնակի բավարարելու համար:

Վերը նշված հարցերին պատասխանելու նպատակով Գերագույն դատարանը հարկ է համարում անդրադառնալ ստորադաս դատարանների և բողոքաբերի կողմից վկայակոչված իրավական նորմերին:

Սյապես Օրենսգրքի 1056-րդ (գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1059-րդ) հոդվածի համաձայն՝ եթե անմիջականորեն այլ անձի շահերի ապահովմանը չուղղված գործողությունները՝ ներառյալ այն դեպքում, երբ դրանք կատարող անձը սխալմամբ ենթադրել է, որ գործում է ի շահ իրեն, հանգեցրել են այլ անձի անհիմն հարստացման, կիրառվում են սույն օրենսգրքի 61-րդ գլխով (գործող՝ 63-րդ) նախատեսված կանոնները:

Օրենսգրքի 1092-րդ (ներկայումս գործող քաղաքացիական օրենսգրքի 1100-րդ) հոդվածի համաձայն՝ 1. Անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), բացառությամբ սույն օրենսգրքի 1099 հոդվածով (գործող օրենսգրքի 1107-րդ) նախատեսված դեպքերի: 2. Սույն գլխի կանոնները կիրառվում են անկախ այն բանից, անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետևանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ:

Օրենսգրքի 1093-րդ (ներկայիս գործող՝ 1101-րդ) հոդվածի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով և չի բխում համապատասխան հարաբերությունների էությունից, սույն գլխում (Գ.Դ՝ «Անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորություններ» վերտառությամբ) նախատեսված կանոնները ենթակա են կիրառման նաև՝ 1) անվավեր գործարքով կատարվածը վերադարձնելու պահանջների նկատմամբ, 2) սեփականատիրոջ կողմից իր գույքն ապօրինի տիրապետումից հետ ստանալու պահանջների նկատմամբ, 3) պարտավորության մեկ կողմի՝ մյուսից այդ պարտավորության կապակցությամբ կատարվածը վերադարձնելու պահանջների նկատմամբ:

Օրենսգրքի 1094-րդ (ներկայիս գործող՝ 1102-րդ) հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անհիմն հարստացման առարկա գույքը ձեռք բերողը պետք է տուժողին վերադարձնի բնեղենով, իսկ Օրենսգրքի 1095-րդ (գործող՝ 1103-րդ) հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ անհիմն հարստացման կամ խնայման միջոցով ձեռք բերված գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում ձեռք բերողը պետք է տուժողին հատուցի ձեռք բերման պահին այդ գույքի իրական արժեքը, ինչպես նաև գույքի արժեքի հետագա փոփոխությունների պատճառով ծագած վնասները, եթե ձեռք բերողն անհիմն հարստացման մասին իմանալուց հետո անմիջապես չի հատուցել գույքի արժեքը:

Օրենսգրքի 1097-րդ (գործող՝ 1105-րդ) հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ով անհիմն ստացել կամ խնայել է գույք, պարտավոր է տուժողին

հատուցել կամ վերադարձնել այն բոլոր եկամուտները, որոնք նա ստացել է կամ կարող էր ստանալ այդ գույքից՝ սկսած այն օրվանից, երբ իմացել է կամ պետք է իմանար հարստացման անհիմն լինելու մասին:

Օրենսգրքի 1098-րդ (գործող՝ 1106-րդ) հոդվածի համաձայն («վերադարձման ենթակա գույքի վրա կատարված ծախսերը հատուցելը» վերտառությամբ)՝ անհիմն ստացված կամ խնայված գույքը վերադարձնելիս (1094-րդ հոդված, գործող՝ 1102-րդ հոդված) կամ դրա արժեքը հատուցելիս (1095-րդ հոդված, գործող՝ 1103-րդ) ձեռք բերողն իրավունք ունի տուժողից պահանջել հատուցելու գույքը պահելու և պահպանելու վրա իր կատարած անհրաժեշտ ծախսերը, սկսած այն օրվանից, երբ նա պարտավոր էր վերադարձնել եկամուտները ...:

Օրենսգրքի 274-276-րդ (գործող օրենսգրքի՝ 275-277-րդ) հոդվածները սահմանել են ուրիշի ապօրինի տիրապետումից իր գույքը հետ պահանջելու սեփականատիրոջ իրավունքը, ապօրինի տիրապետումից գույքը վերադարձնելիս հաշվարկների կարգը, ընդ որում, ինչպես բարեխիղճ, այնպես էլ անբարեխիղճ տիրապետողն իրավունք ունի սեփականատիրոջից պահանջել գույքի վրա իրենց կատարած անհրաժեշտ ծախսերը՝ գույքից ստացված եկամուտները սեփականատիրոջը հասնելու պահից: Բարեխիղճ տիրապետողն իրավունք ունի իրեն թողնել իր կատարած բարելավումները, եթե դրանք կարող են առանձնացվել առանց գույքին վնաս պատճառելու: Եթե բարելավումներն առանձնացնել անհնար է, ապա բարեխիղճ տիրապետողն իրավունք ունի պահանջել հատուցելու գույքը բարելավելու համար իր կատարած ծախսերը, սակայն գույքի ավելացված արժեքից ոչ ավելի չափով:

Օրենսգրքի 304-րդ (գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի նույնպես 304-րդ) հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից: Գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

Գերագույն դատարանը փաստում է, որ նշված իրավանորմերից հետևում է, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ անձը, ով գտնում է, որ խախտվել են իր իրային իրավունքները, հնարավորություն ունի դիմել դատարան ինչպես գործարքն անվավեր ճանաչելու, այնպես էլ ուրիշի ապօրինի տիրապետումից իր գույքը հետ պահանջելու հայցերի շրջանակներում (միջոցով): Իսկ քաղաքացիական իրավահարաբերության մյուս կողմը որոշակի պայմանների պահպանմամբ օժտված է իր կատարած ծախսերը պահանջելու իրավունքով:

Վերը նշված իրավանորմերի մեկնաբանությունից հետևում է նաև, որ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, սակայն օրենսդիրը գործարքի անվավերության հետ կապված հարաբերությունները վերցրել է պաշտպանության տակ (որպեսզի մեղմացնի կնքված գործարքների բացասական հետևանքները) և սահմանել, որ գործարքով ամբողջ ստացածը պետք է վերադարձվի: Նշված իրավանորմերի կարգավորումից բխում է նաև, որ, որպես առաջինը գործարքի անվավերության հետևանք, վերադարձման ենթակա գույքի համար պետք է հաշվարկվի դրա իրական արժեքը, ինչն իր մեջ ներառում է այն ամենը, ինչն օբյեկտիվորեն կստանար անհիմն հարստացողը քաղաքացիաիրավական շրջանառության նորմալ

պայմաններում՝ տվյալ ժամանակահատվածում և տվյալ աշխարհագրական վայրում:

Ինչպես նկատելի է՝ երկու դեպքում էլ (և՛ գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու, և՛ գործարքի անվավերության հետևանքները կիրառելիս) օրենսդիրը վերադարձման ենթակա գույքի վրա կատարված ծախսերի հատուցման հարց է բարձրացնում: Գերագույն դատարանը գտնում է, որ նշված իրավական նորմերը պետք է մեկնաբանել երկկողմանի՝ հաշվի առնելով և՛ հայցվորի, և՛ պատասխանողի շահերը:

Մեկնաբանելով նշված իրավանորմերը, կարելի է արձանագրել, որ պատասխանողի համար առաջին գործարքով ստացածը վերադարձնելու պարտականության մեջ ընդգրկված է այն ամենը, ինչը նա կվճարի այլ անձի կողմից բնակելի տան վրա բարելավումներ կատարելու համար շինարարական նյութերի, շինարարական աշխատանքների արժեքը:

Գերագույն դատարանը գտնում է, որ «գործարքով ամբողջ ստացածը» մեկնաբանելիս պետք է նկատի առնվի, որ այդ հասկացության մեջ օրենսդիրը ներառել է և՛ գույքից օգտվելու, և՛ կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության արժեքը, և այդ ցանկը սպառիչ չէ: Քանի որ գործարքի անվավերության հետևանքները կիրառելու վերաբերյալ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Գործարքներ» վերտառությամբ 19-րդ գլխի 2-րդ պարագրաֆը («Գործարքների անվավերությունը» վերտառությամբ) գույքը վերադարձնելիս հաշվարկներ կատարելու վերաբերյալ իրավական նորմ չի պարունակում, հետևաբար, պետք է կիրառել անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորությունները կարգավորող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը, ինչը բխում է Օրենսգրքի 1093-րդ (գործող՝ 1101-րդ) պահանջներից, որի 1-ին մասի 1-ին կետն ուղղակի սահմանում է, որ եթե այլ բան նախատեսված չէ ..., նույն գլխում նախատեսված կանոնները ենթակա են կիրառման նաև՝ անվավեր գործարքով կատարվածը վերադարձնելու պահանջների նկատմամբ:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ քաղաքացիական իրավունքի այս ինստիտուտը նպաստում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների գույքային իրավունքների պաշտպանությանը, քանի որ ոչ ոք չպետք է հարստանա մեկ ուրիշի հաշվին, առանց դրա համար իրավական հիմքի:

Քննարկվող պարտավորության բովանդակությունն են կազմում անհիմն հարստացողից նրա անհիմն ձեռք բերածը պահանջելու տուժողի իրավունքը և անհիմն ձեռք բերածը կամ անհիմն խնայածը վերադարձնելու անհիմն հարստացողի պարտականությունը:

Օրենսդիրը չի կապում գործարքի անվավերության հետևանքների կիրառումը կողմի (կողմերի) վարքագծի հետ, ինչպես նաև անհիմն հարստացման հետևանքով պարտավորության առաջացման համար նշանակություն չունի, թե անհիմն հարստացումը եղել է հարստացողի, տուժողի, թե երրորդ անձանց վարքագծի հետևանք:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը 2018 թվականի դեկտեմբերի 4-ի որոշմամբ բեկանելով Առաջին աստիճանի դատարանի 25.09.2018թ. վճիռը (որով Լ.Դեմիրճյանի հայցը մասնակի բավարարվել է) և գործն ուղարկելով նոր քննության, ի թիվս այլ խախտումների, նշել է, որ գործով չի քննարկվել կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու հարցը, և արձանագրել, որ նոր քննության ժամանակ հարկ է անդրադառնալ անվավեր գործարքի հետևանքները կիրառելու հարցին: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ տվյալ վեճը ճիշտ լուծելու համար նախ՝ պետք է որոշել իրավահարաբերության նկատմամբ կիրառման ենթակա օրենքը, ապացուցման առարկան, բաշխել ապացուցման պարտականությունը, գործող իրավական պահանջներին համապատասխան հստակ պարզել հայցվորի

կողմից պատասխանողի բնակելի տան վրա կատարված աշխատանքների ծավալը և կատարման օրվա դրությամբ դրանց արժեքը:

Առաջին ատյանի դատարանը, կրկին քննելով գործը, ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասով, գտել է, որ պատասխանող Հ.Գրիգորյանը պետք է հատուցի հայցվորին բնակելի տան նկատմամբ կատարված շինարարական աշխատանքների արժեքը: Դատարանը հիմք է ընդունել նշված իրավական նորմի կարգավորումները, հայցվորի ցուցմունքը, պատասխանողի ներկայացուցչի բացատրությունը, և նշել, որ, գնահատելով գործով ձեռք բերված բոլոր ապացույցները՝ գործի փաստերի հաստատման համար արժանահավատության, վերաբերելիության, բավարարության և թույլատրելիության տեսանկյունից, հանգել է այն եզրակացության, որ հայցը ենթակա է մասնակի բավարարմանը:

Վերաքննիչ դատարանը՝ բողոքարկված 01.06.2020թ. որոշմամբ մեկնաբանելով իրավահարաբերության ծագման պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1056-րդ, 1092-րդ, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-45-րդ, 47-րդ, 49-րդ հոդվածները, և գտնելով, որ բնակելի տունը հայցվորի տիրապետման տակ էր գտնվում առաջին գործարքի հիմքով, արձանագրել է, որ միայն պետական գրանցման պահից հայցվորը կարող է սեփականության իրավունքով ձեռք բերել և իրեն համարել գույքի օրինական տիրապետող, և որ հայցվորը բնակելի տան վրա շինարարական աշխատանքների տեսքով որևէ ծախս կատարելիս չէր կարող սխալմամբ ենթադրել, որ գործում է ի շահ իրեն, քանի որ անշարժ գույքի առուվաճառքի գործարքն օրենքի պահանջի համաձայն նոտարական վավերացման և դրանից բխող իր իրավունքները պետական գրանցման չենթարկելով՝ նա ի սկզբանե չէր կարող ենթադրել, որ բնակելի տունը պատկանում է իրեն և դրա վրա իրավասու է կատարել շինաշխատանքների տեսքով բարելավումներ: Նշվածից Վերաքննիչ դատարանն եզրակացրել է, որ առաջին գործարքի վրա հիմնվելով, բնակելի տան վրա հայցվորի կողմից բարելավման նպատակով շինաշխատանքներ կատարելը չի կարող բնակելի տան սեփականատիրոջ համար առաջացնել դրա արժեքը կատարողին հատուցելու պարտականություն: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասը, և Առաջին ատյանի դատարանի հետագոտած ապացույցներով չի հաստատվում այն փաստը, որ հայցվորը բարելավումներ կատարելիս ենթադրել է, թե գործում է ի շահ իրեն, որի չապացուցման պարագայում հայցը ենթակա է մերժման:

Մինչդեռ, նման դիրքորոշումը չի բխում Գերագույն դատարանի նախկինում կայացրած որոշումներում արտահայտած դիրքորոշումներից:

Վերաքննիչ դատարանը, իր որոշման մեջ նշելով, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստեր են հանդիսանում հետևյալ փաստերը. 1) անձը սխալմամբ ենթադրել է, որ գործում է ի շահ իրեն, 2) տվյալ գործողության արդյունքում մեկ այլ անձ ձեռք է բերել կամ խնայել է գույք, 3) գույքի ձեռք բերումը կամ խնայումը չի բխում օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքից, գտել է, որ հայցվոր Լ.Դեմիրճյանը բնակելի տան վրա շինաշխատանքների տեսքով որևէ ծախս կատարելիս չէր կարող սխալմամբ ենթադրել, որ գործում է ի շահ իրեն: Վերաքննիչ դատարանի նշված եզրահանգումն անհիմն է, քանի որ կողմերի միջև կնքված գործարքը փաստացի կատարված է եղել, առուվաճառքի առարկա բնակելի տունը պատասխանողը իր կամքով հանձնել է հայցվորին, և պատասխանողը պետք է նախատեսեր, որ բնակելի տունը կարող է փոփոխման ենթարկվել, տան դիմաց վճարվելիք 1.000 ԱՄՆ դոլար գումարից վճարված էր 800 ԱՄՆ դոլարը, մնացել է վճարել միայն 200 ԱՄՆ դոլարը: Հետևաբար, վճարել բողոքի փաստարկներն այն մասին, որ Վերաքննիչ

դատարանը չի կիրառել կիրառման ենթակա իրավանորմերը, հիմնավոր են: Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ հայցվորը չի կարող ենթադրել, որ գործում է ի շահ իրեն, հերքվում է վերը նշվածով:

Մյուս հարցը, որին պետք է պատասխանի Գերագույն դատարանը, դա ապացույցների բավարարության հարցն է:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին ապացուցման պարտականությունը և ապացուցման առարկային վերաբերող իրավանորմերը նախատեսել է 44-րդ հոդվածում, ըստ որի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ինքն ապացուցի իր վկայակոչած փաստերը, և գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: Սակայն գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված ապացույցներն ինքնին չեն կազմում ապացուցման առարկա: Ապացուցման առարկա են կազմում միայն գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված այն ապացույցները, որոնք գործի լուծման համար էական նշանակություն ունեն: Հայցվորը պետք է ապացուցի իր պահանջների հիմքում ընկած փաստերը, իսկ պատասխանողը, եթե չի ընդունում հայցը և հենվում է որոշակի փաստերի վրա, պարտավոր է ապացուցել իր առարկությունների հիմքում ընկած փաստերը, կամ եթե հայցվորն է առարկում պատասխանողի բերած փաստերի դեմ, ապա նա է պարտավոր ապացուցել իր առարկությունների հիմքում ընկած փաստերը: Նման իրավակարգավորումը հետևում է այն տրամաբանությանը, որ տվյալ փաստի վրա հիմնվող կողմն ավելի իրազեկ է և դատարանին կարող է ներկայացնել տվյալ փաստն ապացուցող հանգամանքները, և որ շահագրգռված կողմը կձեռնարկի բոլոր միջոցներն իր մատնանշած փաստն ապացուցելու համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածը, ի թիվս այլնի, ապացույցների տեսակների շարքին է դասել գործին մասնակցող անձանց ցուցմունքները և փորձագետների եզրակացությունները:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ գործին մասնակցող անձինք պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն: Գործին մասնակցող անձինք սուտ ցուցմունք տալու համար ենթակա են պատասխանատվության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այս առումով սույն քաղաքացիական գործի ճիշտ լուծման համար առանցքային ապացույց է հանդիսանում փորձագիտական եզրակացությունը, որն արտացոլում է տվյալ ժամանակահատվածում գործող գներով շինանյութերի և շինարարական աշխատանքների արժեքի հանրագումարը: Հետևաբար, սույն գործով Առաջին ատյանի դատարանի կողմից փորձագետի եզրակացությունը հիմք ընդունելն ու վճիռ կայացնելը որևէ պարագայում չի կարող համարվել ոչ իրավաչափ: Ավելին, ոչ պատասխանողը, ոչ էլ նրա ներկայացուցիչը որևէ առարկություն չեն ներկայացրել փորձագետի հաշվարկների առնչությամբ (նշելով միայն, որ հայցվորն աշխատանքներ չի կատարել, կամ էլ կատարել է առանց սեփականատիրոջ համաձայնության):

Ինչպես հետևում է գործի նյութերից, հայցվորի ցուցմունքներով հաստատվել է, որ բնակելի տունը գնելուց հետո այնտեղ կատարվել են շինարարական աշխատանքներ, որոնց իրականացումը հաստատվել է նաև դատաշինարարատեխնիկական փորձաքննության եզրակացությամբ: Կատարված աշխատանքներն ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել հնարավոր չէ: Առաջին ատյանի դատարանը, ճիշտ գնահատական տալով գործով հավաքված ապացույցներին, 2.300.000 ՀՀ դրամ պահանջից հայցը

բավարարել է փորձագետի եզրակացության մեջ արտացոլված 616.950 ՀՀ դրամի չափով, որը ողջամիտ է:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ապացույցները բավարար են համարվում, եթե նրանց հիման վրա դատարանը կոնկրետ գործով կարող է լուծել վեճը: Ապացույցների բավարարությունը դա գնահատողական կատեգորիա է, որի բացահայտումը կապված է դատարանի հայեցողության հետ: Տվյալ դեպքում Առաջին աստիճանի դատարանը ճիշտ է գնահատել գործով ձեռք բերված ապացույցները և որոշել կիրառման ենթակա իրավական նորմերը: Հետևաբար, Վերաքննիչ դատարանն անհիմն է բեկանել Առաջին աստիճանի դատարանի վճիռը:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքում վկայակոչված Գերագույն դատարանի որոշումներին, Գերագույն դատարանն արձանագրում է, որ միայն թիվ ԸԲԴ/1176/02/17 ըստ հայցի Կ.Միրզոյանի ընդդեմ Ա.,Վ., ...Թադևոսյանների՝ բնակելի տնից վտարելու ու գումար բռնագանձելու և հակընդդեմ հայցի՝ առջինս գործարքի անվավերության հետևանքները կիրառելու ու գումար գանձելու մասին քաղաքացիական գործով է Գերագույն դատարանի 31.01.2019թ որոշմամբ հիմնավոր համարվել Վերաքննիչ դատարանի եզրահանգումը փորձաքննության արդյունքում ամրագրված շինարարական աշխատանքների արժեքը բռնագանձելու մասին, այսինքն՝ դատարանները կիրառել են գործարքի անվավերության հետևանքները, մյուս՝ բողոքում վկայակոչված երկու գործերով (թիվ ԸԲԴ/0528/02/11, ԸԲԴ/1601/02/13/) կողմերի միջև գործարքներ կնքված չեն եղել, սակայն դատարանը, կիրառելով ԼԴՀ քաղաքացիական օրենսգրքի 1056-րդ, 1092-րդ, 1095-րդ հոդվածները, առանց օրինական հիմքի գույքի տիրապետողի օգտին բռնագանձել է գումար՝ որպես գույքի անբաժանելի բարելավման համար կատարված ծախս: Ընդ որում, Գերագույն դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում հարկ է համարել ընդգծել, որ «դատարանները քաղաքացիական գործերով վնասների չափը որոշելիս պետք է ղեկավարվեն ողջամտության, արդարացիության և համաչափության սկզբունքներով», «...ավելորդ ծախսերը (...ճոխության ծախսեր և այլն), ...հատուցման ենթակա չեն (տես՝ թիվ ԸԲԴ/1401/02/19 քաղաքացիական գործով 28.02.2020թ. և թիվ ԸԲԴ/1601/02/13 քաղաքացիական գործով 25.05.2017թ. Գերագույն դատարանի որոշումները):

ԱՀ Մահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ..., ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Նշված իրավանորմերի մեկնաբանությունից բխում է, որ դատարանի միջոցով սուբյեկտիվ իրավունքների արդյունավետ պաշտպանությունը ենթադրում է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովում, բացառելով անձի քաղաքացիաիրավական վիճակի անորոշությունը, նպատակ ունենալով շահագրգիռ անձին պաշտպանել երկարատև անորոշ վիճակից և ապահովել արդարադատության իրականացումն առանց ձգձգումների:

Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով պետք է կիրառել ԼԴՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված Գերագույն դատարանի լիազորությունը, այն է՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով

Գերագույն դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում Գերագույն դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանի 01.06.2020թ. որոշումը պետք է բեկանել և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 04.03.2020թ. վճռին:

5.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: ... 3. Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան»:

Ինչպես հետևում է Առաջին ատյանի դատարանի 04.03.2020թ. վճռից՝ դատարանը լուծել է դատական ծախսերի հարցը, և այդ մասով բողոք չի բերվել: Իսկ քանի որ Առաջին ատյանի դատարանի 04.03.2020թ. վճռի դեմ վերաքննիչ բողոքը բերել է պատասխանող Հ.Գրիգորյանը և դրա համար վճարել պետական տուրք, ապա այդ մասով դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված: Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի համար հայցվոր Լ.Դեմիրճյանի կողմից վճարված 18.510 ՀՀ դրամ պետական տուրքի և 100 ՀՀ դրամ միջնորդավճարի գումարներին, ապա դրանք ենթակա են բռնագանձման Հ.Գրիգորյանից հոգուտ Լ.Դեմիրճյանի՝ ելնելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ԱՀ վերաքննիչ դատարանի 2020 թվականի հունիսի 1-ի որոշումը և օրինական ուժ տալ ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2020 թվականի մարտի 4-ի վճռին:

2. Պատասխանող Հակոբ Գրիգորյանից հոգուտ Լաուրիկ Դեմիրճյանի բռնագանձել 18.610 (տասնութ հազար վեց հարյուր տասը) ՀՀ դրամ՝ վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի դիմաց:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՍՅԱՆ
Հ.ԱԲՐԱՀԱՍՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՈՒՂՂՈՒՄ

«Արցախի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» պարբերականի 2020թ. N19(410) և N21(412) համարների բովանդակություններում «Արցախի Հանրապետության Գերագույն դատարանի որոշումները» բաժնում տեղ են գտել վրիպակներ՝ «վերաքննիչ» բառի փոխարեն կարդալ «Գերագույն» բառը:

ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ